

12804

Գ. ՊԱՎԼՈՎ

ԲՐՈՆ ԶՅԱ ԿՈՒՌԻՔ

ԴՐԱՄԱ ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

ԶԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԱԶՍՏԱԳՐՄԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՑ

891.71
12.68
7-27

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1936

25 NOV 2014

891.71
7-27
ար

Գ. ՊԱՎԼՈՎ

22 JUN 2007



ԲՐՈՆԶՅԱ ԿՈՒՌՔ

ԴՐԱՄԱ 5 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ
ԶԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՑ

Փոխպրոքուհ ԱՐՇ. ՏԵՐ-ՀՈՎՆԱՆՅԱՆԻ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1935

1005 JUL 2013

1005 JUL 55

12804

Գատ. խմբ. [redacted]
Տեխ. խմբ. Հ. Տեր-Դավթյան
Սրբազրիչ Մ. Գեվորգյան

Հրատ., 3446 Տիրաժ 2000
Հանձնված է արտադ. թիվ X.
Ստորագրված է տպելու
27/XI-35 թ. Սա.Ա.-5 148x210.

Край лит № 00-11437
Ростов на Дону. Заказ № 5094
Тип. им. Стачки 1902г, АЧКПТ



3493
41

Թույլատրված է մեպերտուա-
բային եսկադուրյան գլխա-
վար վարչության կազմից կա-
տարման համար, Ա. լիտերալ
ՀՄԽՀ ասեմեմենբում. № 33
22 ագտտ. 1935 թ. Յերեվան.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁՆԵՐ

ԳՄՐՈՆ ԴԵՏԵՐԲՑԵ, Տոնկինի շրջանի գեներալ-նահանգապետ
ՖՐԵԴԵՐԻԿ ՌԱՆՑ, Սոնտայի սեզիդենտ
ԶՈՅԱ ՌԱՆՑ, նրա կինը
ԺՈՐժԵՏ ՆԱՆՏԵՅԼ, նրա ընկերուհին, գերաստուհի
ԼԻ-ՏՈՒՈՆԳ, արդարադատության մանդարին
ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ, մանդարին
ՈԱ-ՇԵՆ, նրա կինը
ԳՆԴԱՊԵՏ ՌԱՎԵՆՇՏԵՅՆ, պերատության դեմ պայքարող պարլամենտական
հանձնաժողովի արտակարգ լիազոր
ԿԼՈՒ ՌԱՎԵՆՇՏԵՅՆ, նրա վորդին, լեյտենանտ
ԻԳՈՒՆ-ԱՆ, դիտնական, պաշտոնաթող մանդարին
ԲՈՍԿԱՐԵՆ, սեզիդենցիայի գիվանապետ
ՄԱԺԵՐՈ, հաշվապահ
ՎԻԼՅԵՐ, արձանագրող
ՖՐԵՆԵԼ, հեռագրական պաշտոնյա
ԼԵՑՏԵՆԱՆՏ ԵԿՄՅՈՒԼ
ՏԻ-ԱՆԳ, տեղական միլիցիայի սերժանտ
ԴԻՆԳ } սեզիդենցիայի սուբնահանգներ
ՎՅԵՆ }
ՖԱՈ, Կուանգ-Սինգի կամեզդիները
ԿՈՆԳԱՅԻ (աղաթին)
ԱՌԱՋԻՆ ԴԱՀԻՃ
ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՀԻՃ

Մանդարիններ, սեզիդենցիայի պաշտոնյաներ և նրանց կանայք, բոսներ,
կոնգայիններ, միլիցիոներներ, տոնկինյան գիւմորներ,
Դործողությունը կատարվում է Սոնտայում, տոնկինյան դելատայի քաղաք-
ներից մեկում:
Ժամանակը՝ համալրարհային պատերազմից փոքր ինչ առաջ,

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ռեզիդենցիայի գրասենյակը Մեծ, սպիտակացրած սենյակի Հասարակու- շխոնից դեպի աջ յեղած պատը սյունաշարը և կարմիր փայտից, վորի միջով մասամբ յերևում և դարավանդի ծածկույթը: Յետեվի պատի մեջ, սյունա- արքին ավելի մոտ՝ դուռ: Ձախ պատի մեջ ևս դուռ: Պահարաններ՝ գործերով, աղյուսակներ, ցուցակներ, պլակատներ: Սեղանների վրա համբիշներ, թղթեր, գրամեքենաներ: Խորքում՝ առանձին սեղանի վրա՝ հեռագրական ապարատ: Շոգ առավոտ և: Ամեն ինչ անկարգ վիճակի մեջ և: Աթոռները յետ ևս քաշ- ված, թղթի գամբուղները սեղանների վրա յեն: Շարժական սանդուխտ:

Սուրհանդակները Մ ա ժ եր ո յ ի հսկողությամբ տեղադրեն մաք- րում, կարգի յեն բերում սենյակը:

ՄԱԺԵՐՈՒ. (կարգադրում և) Շնուտ, շնուտ: Դեղին անպիտաններ: Յես ձեզ կսովորեցնեմ թոչեյ, այլ վոչ թե կրիայի պես մագլցել: Իհնգ:

ԴԻՆԳ. Լուում եմ, կապտոն: ՄԱԺԵՐՈՒ. Ո՞ւմ հրամայեցի պահարանների փողին մաքրել... Գճեցե քո տատին... Ո՞ւր և սանդուխտը:

ԴԻՆԳ. Մի բոպե, կապտոն: ՄԱԺԵՐՈՒ. Շնուտ ... իսկ, դժև, Վյեն: Մաքրել ևս դռների բըռ- նակները:

ՎՅԵՆ. Մաքրել եմ, կապտոն: ՄԱԺԵՐՈՒ. Յերեվում և. նրանք այնպես մաքուր են, ինչպես քո հյուսը: Ծույլեր, ձրիակերներ: Շնուտ: Մի վոտքն այստեղ, մյուսն՝ այնտեղ:

ՎՅԵՆ. Այն ժամանակ չի լինի «շուտ», կապտոն: Այն ժա- մանակ կլինի կես մարդ, կես գործ:

ՄԱԺԵՐՈՒ. Դու դեռ խոսում ևս, դեղին կապիկ... Յես քեզ...

(Վերցնում և սեղանից փռեի մաքրելու շորը յեվ խփում սուրհան- դակի մեջքին) Յես քեզ ցույց կտամ խոսել...

Վյենը կայում և սանդուխտին: Դ ի ն գ ը, վոր բարձրացել և սան- դուխտի վրա, ցած և գորվում:

ԴԻՆԳ. Ա՛յ ո՛յ, կապտոն... Ինչ մնաց գամբուղն ընկնելի... ՄԱԺԵՐՈՒ. Գո իսկական տեղը գամբուղն և, ծուռթաթ դեպ: Ձեզ հետ անկարելի յե գործ անել... Հեռացրու սանդուխտը: Սան- դուխտը մի կողմ քաշիր, քեզ եմ ասում... Ձգույշ: Գրամեքենան վայր չզցես: Գրամեքենան քո դեղին կաշվից ավելի արժե... Մաքրիր այստեղ... Կոտրած վոտքով աթոռը դիր անկյունը... Այնտեղ չե, տխմար... Մյուս անկյունը... Ապուշներ:

Սուրհանդակները ցնորվածների նման դես ու դեն են վազվում:

ՎԻԼՅԵՐ. (Ներս և գալիս) Այս ի՞նչ Սողոմ և, Մաթերո: Ա՛, արմատապես մաքրում ևս գրասենյակը... Ինչպես յերեվում և, քեզ մաքրասիրության ճանճ և կծել: Դա հաճախ չի պատահում:

ՄԱԺԵՐՈՒ. Ռավենշտեյներն ել հաճախ այցի չեն գալիս:

ՎԻԼՅԵՐ. Բն, ուրեմն այս բարելոնյան աշտարակաշինությունը նրան համար և:

ՄԱԺԵՐՈՒ. (Բարկացած) Վոչ, ձեզ համար և: Իպատիվ քո հեր- թական նշանադրության:

ՎԻԼՅԵՐ. Չարժե, բարեկամս: (Ծիծաղում և) Գործը կրկին գլուխ չեկավ:

ՄԱԺԵՐՈՒ. Հայտնի բան և... Ձե՛ վոր դու մեր մշտական փեսա- ցուն ևս...

ՎԻԼՅԵՐ. Իմ նպաստավոր արտաքինի շնորհիվ շատ ել հաս- տատակամ լինելն իմաստ չունի: Ձե, ինձ այժմ ուրիշն և հետաքրք- րում: Ի՞նչ կասես Նանտելի մասին... Ի՞նչ աչքեր... Իսկ մա- զերը, ժպլ՛ար...

ՄԱԺԵՐՈՒ. (Բրբմնջում և) Անեծք քեզ չար սատանա:

ՎԻԼՅԵՐ. Նանտելի մասին, համենայն դեպս արժե, խոսել: Դեղեցիկ կին և... Դա, բարեկամս, նույնիսկ այս արևադարձային յերկրում ոտալ արժեք և ներկայացնում: Թե չե, ի՞նչ վոր Ռա- վենշտեյն...

ՄԱԺԵՐՈՒ. Ե՛յ, Վիլյեր, հիմարություններ դուրս մի տուր... «Ի՞նչ վոր Ռավենշտեյն»... Նա քեզ կսովորեցնի անհրաժեշտ հար- գանքով վերաբերվելու իրեն: Նա քեզ կսանձահարի, սիրելիս:

ՎԻԼՅԵՐ. (Մեկնվելով բազմոցին) Բավական և սարսափ տարա- ծես: Մեզ մոտ զինվորական հիմնարկություն չե, այլ քաղաքացիա- կան: Մեր ի՞նչ գործն և:

ՄԱԺԵՐՈՒ. Իսկ նա քեզ ցույց կտա, թե ինչ... Դու նրան չես ճանաչում, իսկ յես ճանաչում եմ: Յես նրա ձեռքն ընկել եմ, սատանան տանի, զիտեմ: Ե՛յ դուք, դեղին սրիկաներ, պատրա՞սա ե...

ԴԻՆԴ. Մի բոպե, կապտոն:

ՄԱԺԵՐՈՒ. Ձեր բոպեն արդեն մեկ ու կես ժամ է: Յերբ վերջացնեք, — մարդ, հագուստներդ փոխելու: Դուք կեղտից ել կեղտոտ եք... Ո՛ր, խայտառակություն... Յե՛վ սրանք հանրապետության ռեզիդենցիայի սուրհանդակներ են...

ՎԻԼՅԵՐ. Պարոն հաշվապահ, դե՛ք ինչու յեք հուզվում: Համենայն դեպս, դա պարոն զիվանապետի գործն է և վոչ թե ձեր:

ՄԱԺԵՐՈՒ. Պարոն արձանագրող, պարոն զիվանապետն, ըստ յերեվույթին, նույնպիսի անհոգ եղ է, ինչպիսին դուք եք:

ՎԻԼՅԵՐ. Շնորհակալ եմ:

ՄԱԺԵՐՈՒ. Անուշներ: Պարոն զիվանապետը, հավանորեն, նույնպես հավատացած է, վոր Ռավենշտեյնն այստեղ միայն զինվորականներին հուպ կտա, իսկ քաղաքացիական պաշտոնյաները կարող են առաջվա նման ինչ ուզեն, անեն:

ՎԻԼՅԵՐ. Վոչ, վորքան յես զիտեմ, պարոն Բուսկարենը դրանում հավատացած չե: Նա յել հուզված է ու մտահոգված: Բայց, հավանորեն, դուք նրա հետ աշխատանքի բաժանում եք կատարել: Մինչ դուք գրասենյակն եք քերում, նա դռների մոտ Ռավենշտեյնին է սպասում, հարմար առիթ վորոնելով նրա կոշիկները մաքրելու:

ՄԱԺԵՐՈՒ. Հիմար:

ՎԻԼՅԵՐ. Դուք կրկնություն եք անում, սիրելիս: Դա ապացույց է յերեվակայության աղքատության:

Հեռագրակա՞ն ապարտի գանգ:

ՄԱԺԵՐՈՒ. Ըհը՛... Սա՛ յեր պակաս... Ֆրենել... Ֆրենել... Ո՞րք ես կորել...

ՖՐԵՆԵԼ. (Շտապ նետս է գալիս) Այստեղ եմ, այստեղ... Ձեն թողնում մարդ շո՞ւնչ քաշի: Հիմի կսկսվի աղմուկը: Հազար մետր հեռագրական ժապավեն... (Սկսում է հեռագիր բնդունել) Տոնկոայ, տասնութին... Յերեվակայում եմ ինչ կարևոր նորություններ են լինելու... (Պատուգա: Վարդում է հեռագիրը) Ոհո՛... Լսեցեք... Մակայն, բարեկամներս...

ՎԻԼՅԵՐ Ի՞նչ է...

ՖՐԵՆԵԼ. Լսեցեք: Տոնկոայ, տասնութին, ինը քսանին առավոյան: Այս գիշեր պիրատների ջոկատը, ըստ յերեվույթին Պանգի ավազակամբից...

ՄԱԺԵՐՈՒ. Սպասի՛ր... Վերջացրի՛ք, դեղին սրիկաներ...

ՎՅԵՆ. Պատրաստ ե, կապտոն: Սրանից մաքուր չի լինի:

ՄԱԺԵՐՈՒ. Դեպի ձախ, յես դարձ, մարդ: (Սուտհանդակները գնում են) Այս կապիկների ներկայութեամբ պետք է զգուշ լինել: Նրանցից յուրաքանչյուրը կարող է Պանգի գործակալը լինել: Հետո՞...:

ՖՐԵՆԵԼ. Պանգի ավազակամբից, հարձակվեցին Տոնկոայ պահակակետի վրա: Պահակակետը հրդեհված է, թալանված կետ: Ինը զինվոր սպանված են, յոթը վիրավորված, կետ: Մանրամասնությունները փոստով պիրատները թագնվեցին, կետ:

ՄԱԺԵՐՈՒ. Ահա քեզ կես...

ՎԻԼՅԵՐ. Վերջինը կարելի յեր և չհաղորդել. համենայն դեպս յերկու բառ կտնտեսվել: Թագնվեցին: Ի՞նչ նորություն է դա: Տարորինակ կլինեք, յեթե հակառակը պատահած լիներ:

ՖՐԵՆԵԼ. Կատակը կատակ, բայց և այնպես... Տոնկոայն այստեղից յերեսուն յերկու կիրոմիտրի վրա յե...

ՄԱԺԵՐՈՒ. Այժմ այդ բոլորը վերջ կունենա:

ՖՐԵՆԵԼ. Ի՞նչը: Պիրատային շարժումը: Ինչպես չե: Կարծես բանը մենակ մի Պանգի մեջ է... Տոնկինն է արթնանում, վողջ Հնդկաչինն է արթնանում, վողջ Ասիան է արթնանում, ահա ինչ է նշանակում դա, բարեկամներս...

ՄԱԺԵՐՈՒ. Հիմարություններ ես: Տոնկինում պիրատներ միշտ յեղել են...

ՖՐԵՆԵԼ. Յեղել են, ճշմարիտ է: Բայց նրանց բռնում եյին, կախ եյին տալիս և նրանք յերկար ժամանակ հանգիստ եյին մնում: Առաջ յերեկիցե լսել ես, վորպեսզի նրանք հարձակվեյին զինվորական պահակակետի վրա: Իմ կարծիքով դա, համենայն դեպս, նոր յերեվույթ է: Պանգը Սոնտայում, Դեկլամը Պյուկայում ֆենում, Դոկ-Իգուենը Բինդգանում, և նրանք բոլորն էլ անմարմին վողիների նման չեն բռնվում և շարունակ, պաղութային աղմինիստացիայի քթի տակ, սատանան գիտե ինչեր են անում: Վոչ, բարեկամներս, դա դատարկ բան չե և վոչ մի Ռավենշտեյն այստեղ վոչինչ անել չի կարող:

ԲՈՍԿԱՐԵՆ. (Նետս է գալիս դատավանդից) Բոլորն իրենց տեղերում են... Ահա ինչ... Ֆրենել, այդ ի՞նչ հեռագիր եք թափա-

հարում... (վերցնում ե հեռագիրը) Գիտեմ... Կցեք գործին... Դա
յերեկվա լուր ե:

ՄԱՅԻՆՈՒ. Հետաքրքիր ե, գուց վերտեղից եք իմացել:

ԲՈՍԿԱՐԵՆ. Համար քառասուն յերեք պահակակետից հեռա-
գրել եյին Ռանցին: Միլիցիոներներին, այնուամենայնիվ, հաջողվել
ե այդ քաղերից մեկին բռնել և հիմա նրան քարշ են տալիս այս-
տեղ: Ռավենշտեյնը հայտնել ե, վոր ինքն անձամբ ներկա յե
լինելու հարցաքննությանը...

ՎԻԼՅԵՐ. Այդ դեպքում այլևս ինչ կարիք կար այս հեռագիրն
ուղարկելու... Քանի վոր ռեզիդենցիայի ձեռագրին գրված ե ամեն
ինչ վերջինս իմանալու...

ԲՈՍԿԱՐԵՆ. Այլևս այդպես չի լինի: Սրանից հետո ամեն ինչ այլ
կերպ կլինի: Ամեն ինչ յեռ կգա... Զգուշացեք, պարոն չինովնիկ-
ներ... Զեզանից յուրաքանչյուրի գունչը մաքուր չե...

ՎԻԼՅԵՐ. Մեզանից յուրաքանչյուրի, պարոն դիվանապետ,
գուց իրավացի յեք...

ԲՈՍԿԱՐԵՆ. Ի՞նչ... Իհարկե, գրողը տանի... Յես այդպես ել
ասացե... ուզում եյի ասել... Այո: Դուք, Ֆրենկ, մի փոքր ի
չարն եք գործ դնում պետական հեռագիրը ձեր անձնական առե-
տրական հարաբերությունների համար: Յես գիտեմ, դուք յեր-
բեմն ձեր հեռագրերի յերեք բառը մեկ բառ եք հաշվում...

ՖՐԵՆԿ. Յեթե Ռավենշտեյնն սկսի քրքրել հեռագրային հա-
շիվները, փոխանակ Պանդին վորսալով զբաղվելու...

ԲՈՍԿԱՐԵՆ. Նա վոչ մի բան չի քրքրի, բայց նա այնպիսի
մարդկանցից ե, վոր տեսնում ե առանց նայելու: Վիլյեր, դուք
խառն եք բրնձի գործում...

ՎԻԼՅԵՐ. Կարծես մենակ յես եմ, պարոն դիվանապետ...

ԲՈՍԿԱՐԵՆ. Դե, դե... Յես առանձին բան չեմ ասում... Յես
միայն նախագրուշացնում եմ, ձեր իսկ շահերի համար... Այդ
դեղիններից ամեն մեկը, վորոնց մագերից ձեզանից յուրաքան-
չյուրը յերբեմն հայրաբար ձիգ ե տալիս, առիթ հանդիսացած դեպ-
քում ուրախությամբ կմատնի ձեզ: Նրանց դուք մարդ չեյիք հա-
մարում, ուստի բնական ե, նրանց, ներկայությունից քաշվելու
հարկ չկար... Բայց այժմ հարկավոր ե այդ քաղաքականությունը
փոխել: Մի մոռացեք, վոր նրանք, այնուամենայնիվ, գտնվում են
մեր պրոտեկտորատի տակ, նույն Ֆրանսիական քաղաքացիներն
են, գրողը տանի... Հավասարություն, յեղբայրություն... Այո,
վատ չի լինի յերբեմն մտաբերել այս... Մաթերոյի գրությունն

ամենից անախորժն ե: Յեթե հարց առաջանա ոպիումի կոնդու-
բանդի մասին, վախենում եմ, վոր դուք միայն վորպես վկա
չկանչվեք...

ՄԱՅԻՆՈՒ. Հըմ... Յենթադրում եմ, վոր չի առաջանա...

ԲՈՍԿԱՐԵՆ. Զի կարելի իմանալ, թանկագինս, չի կարելի
իմանալ...

ՄԱՅԻՆՈՒ. Իմանալ չի կարելի, բայց կարելի յե վստահել, վոր
դուք մինչև այդ թույլ չեք տա, պարոն Բոսկարեն: Զեզ համար
ել այդ գործն այնքան ել ձեռնտու չե, յեթե բանն այդտեղ
հասնի...

ԲՈՍԿԱՐԵՆ. Բարեկամներս, իհարկե, յես կանեմ, ինչ հնարա-
վոր ե: Դուք գիտեք ինչպիսի անկեղծությամբ եմ վերաբերվում յես
ձեզ, Այս անիծյալ յերկրում մենք յեվրոպացիներենք և պետք ե
սարի պես մեջք մեջքի տանք:

ՖՐԵՆԿ. Իհարկե, մի յեվրոպացի ավելի արժե, քան հազարա-
վոր չինացի:

ԲՈՍԿԱՐԵՆ. Վերջ ի վերջ ովքեր են այս դեղինները... Նրանք
յեղել են և կմնան մեզ միշտ ստրուկ և մենք նրանց հաշվին ու
նրանց աշխատանքով բարձրացնելու յենք մեր տնտեսությունը:
Նրանք ստեղծված են Ֆրանսիայի և Ֆրանսիացու համար: Բայց
պետք ե զգուշ լինել, պարոնայք, ընդհանրապես, չպետք ե մո-
ռանալ յերբեք քաղաքականությունը: Ճիշտ չեմ ասում, պարո-
նայք... Հա, ի դեպ, ինչպես ասում են, յես հոգեպահուստ մի շիշ
կոնյակ ունիմ... Այսոր յերեկոյան հավաքվեք ինձ մոտ և մաղ-
թենք, վոր ամեն ինչ բարեհաջող վերջանա...

ՄԱՅԻՆՈՒ. Դա ուրիշ բան ե: Թե չե վախեցնել բարեկամներին...
Ներս եմ գալիս 2 դահիմ:

ԲՈՍԿԱՐԵՆ. Ա՛, շնորհ բերեցիք... պարանոցային գործի վար-
պետներ... Դուք պետք ե սպասեք, հաճախորդը դու տեղ չի հա-
սել... Միայն դիտեք, աշխատեցեք խղճի մտք: Խղճահարվել
չլինի... Յեթե դուք մտածեք խղճահարվել նրան, վորովհետև նա
ձեր հայրենակիցն ե, ձեզ նման դեղնամորթ ե, ապա... զգուշացեք
ձեր սեփական կաշվից: Հասկացե՛ք:

ՅԵՐԿԻՐՈՐԴ ԴԱՆԻՃ. Հասկացանք, կապտոն:

ԲՈՍԿԱՐԵՆ. Պիրասն որենքից դուրս ե: Նա հանրապետու-
թյան թշնամին ե, իսկ հանրապետությունը կերակրում և հագցը-
նում ե ձեզ... Հանրապետությունը կարգ ու կանոն ե բերում ձեր
յերկիրը, բարձրացնում ե ձեր յերկրի արդյունաբերությունը:

պաշտպանում ե ձեր ազգային իշխանութիւնը և ձեր ազատութիւնը: Առայժմ գնացե՛ք զարավանդ, սպասեցե՛ք այնտեղ:

Դահլիճները դուրս են գե՛լ:

ՎԻԼՅԵՐ. Այդ արդեն զգվելի յե... Այդ նշանակում ե կեղտոտել հիմնարկութիւնը: Սովորաբար հարցաքննութիւնը տեղի յե ունենում արդարադատութիւն մանդարինի մոտ, նրանց տեղը հենց այնտեղ ե... Այստեղ վոչ տանջարան ե, վոչ ել բանտ: Դա Ռանցի հնարած բանն ե...

ԲՈՍԿԱՐԵՆ. Վերջապես հարկավոր ե ցույց տալ, վոր ապստամբական շարժումների դեմ մղվող պայքարը կենտրոնացած ե ուղղակի յայնտեղ...

ՄԱԺԵՐՈ. Այդպիսի տրյուկներով Ռավենշտեյնի աչքերին թող քննել չի լինի: Նա կիմանա ինչը վորտեղ ե կենտրոնացած... Ճշմարիտն ասած, յեթե Ռավենշտեյնի արտակարգ լիազոր նշանակվելու հետևանքով պարոն Ֆրեդերիկ Ռանցն այստեղից թռչի, յես դեմ չեմ լինի:

ԲՈՍԿԱՐԵՆ. Մաժերո... ներեցե՛ք ինձ, բայց դուք ուղղակի վոչինչ չեք հասկանում... Ռանցը թիթեռնիկների կողակցիա յե կազմում, նրա հաջորդը կհավաքի հովհարներ կամ փոստանիշներ... և ուրիշ վոչինչ: Ի՞նչ սարքերութիւն, ասացե՛ք խնդրեմ... Իհարկե, նա ուղղիկնտ չե, այլ ուղղիկնտի ծաղրանկար: Սակայն յես, գաղութային ձեր մուկս հավատացնում եմ ձեզ, վոր յերբ հեռացնում ես մեկ ադմինիստրատորի, նրա տեղը միշտ զալիս ե վոչ թե լավը, այլ ավելի վատը...

ՎԻԼՅԵՐ. Դա ձիշտ ե:

ԲՈՍԿԱՐԵՆ. Վատ ազմինիստրատորը մեզ համար նպաստավոր ե... Այդ տեսակետից պետութիւն և մեր նպատակները վորոշ չափով միմիանց չեն... համապատասխանում: Ռանցը մեզ համար անվտանգ ե, վորովհետեւ նա իր քթից դենը չի տեսնում: Այն ժամանակ, յերբ նա ցանցը և ապակյա ամանն առած վազվզում ե ջուրը լինելու, մենք կարող ենք հանգիստ զբաղվել մեր գործերով... Վոչ, անձամբ յես մաղթում եմ նրան ամեն տեսակ հաջողութիւն և այսոր յերեկոյան մենք կխմենք միջատաբան Ռանցի կենացը... Այո... Ֆրենկ, քիչ եր մնացել մոռանայի... Վերջում այս հեռագիրը: Պետք ե հաղորդել Գանտ, գործակալութիւնը, պատճեն «Ապագայի» խմբագրութիւն:

ՄԱԺԵՐՈ. Ի՞նչ ե պատահել... Մենք սկսում ենք լրագրերում գրել...

ԲՈՍԿԱՐԵՆ. Կաղմված ե հակիրճ: Բայց աղբու: Չե՛ վոր դա հասնելու յե Փարիզի բուլվարները, մի մոռացե՛ք: (Կարդում ե) Մոնտայ, տասն ութն ոգոստոսի: Յերեկ տեղս ժամանեց գնդապետ Ռավենշտեյնը՝ պարլամենտական հանձնաժողովի արտակարգ լիազորը, վոր նշանակված ե վերջ տալու պիրատային շարժմանը Մոնտայի և Կարմիր գետի շրջաններում: Այստեղ հավատացած են, վոր գնդապետն իրեն հանձնված գործը կկատարի փայլուն կերպով:

ՖՐԵՆԵԼ. (Նսում ե ապարտքի մոտ) Հեռագիրը հանձնեմ... Իս գործը փոքր ե...

ԲՈՍԿԱՐԵՆ. Բռնենք մեր տեղերը, պարոնայք:

ՎԻԼՅԵՐ. Այնպես ցույց տանք, վոր մինչև կոկորդ թաղված ենք գործերի մեջ:

ՄԱԺԵՐՈ. Կատակեցե՛ք, սակայն ասում եմ ձեզ, վոր մեղանում շուտով այնպիսի գործեր կլինեն, վոր դուք կգերազատեցիք կողմնակի դիտողի դերում լինել, քան ուղղիկնցիայի չինովնիկներ...

Դարավանդի կողմից մտնում եմ Ձոյա Ռանցը, Նանտայի յել Կլոդ Ռավենշտեյնը: Կանայք սպիտակ հագուստով եմ, գուլիներին խցանի սաղավարսներ: Կոյտեմտուր գաղութային հետևակորդի տարագով ե:

ՆԱՆՏԵՅԼ. Տեսնում եք, տեսնում եք, այստեղ աշխատում են... Յես ձեզ ասում եյի, մենք կխանդարենք...

ՎԻԼՅԵՐ. Ամենևին, տիրուհի... Տիկին Ռանց... Մենք այնպես յերջանիկ ենք:

Վաղույններ:

ՆԱՆՏԵՅԼ. Դուք շատ սիրալիր եք, պարոնայք: Այստեղ, ձեզ մոտ գով ե... Յես կարծում եյի, վոր ճանապարհին ճանճի նման վայր կընկնեմ: Յես յերբեք այստեղի կլիմային չեմ վարժվի:

ՎԻԼՅԵՐ. Խիստ կլիմայ յե, տիրուհի: Բայց այստեղ, սովերում համարձակ կերպով կարելի յե սաղավարտը հանել: Մենք յերբեք այսպիսի յերջանկութիւն չեյինք սպասում...

ՆԱՆՏԵՅԼ. Շատ սիրալիր եք: Բայց և այնպես... Ձոյա, յես կարծում եմ, սխալ ե... Չե՛ վոր այստեղ զբասենյակ ե, խաղաղ զբասենյակ: Ճշմարիտ չե՛, լեյտենանտ:

ԿԼՈՂ. Ինչպես տեսնում եք:

ՁՈՅԱ. Մենք իսկույն կիմանանք: Պարոն Բոսկարեն, ձիշտ ե, չե՛, վոր՞ գերի բռնած պիրատին հարցաքննելու յեն վոչ թե Լի-Տուտնգի տանը, այլ այստեղ...

ԲՈՍԿԱՐԵՆ. Միանգամայն ճիշտ է, տիրուհի: Դահլճներն արքան սպասում են:

ՆԱՆՏԵՅԼ. Դահլճներ... Ի՞նչ սարսափ...

ԲՈՍԿԱՐԵՆ. Համարձակվում եմ, իմ հերթին, հարցնել...

ՉՈՅԱ. Այո, այո, յես ձեզ իսկույն կբացատրեմ: Մենք լսել ենք, վոր հարցաքննելու յեն գերի բռնած պիրատին... Ամուսինս ասում էր, վոր հավանորեն, հարկ կլինի նրան խոշտանգելու...

ԲՈՍԿԱՐԵՆ. Անտարակույս: Գիտե՞ք, այդ մարդկանց վերաբերմամբ համարյա միշտ հարկադրված են վորոշ... ստիպողական միջոցների դիմել, յեթե կարելի յես այսպես արտահայտվել:

ՆԱՆՏԵՅԼ. Համարյա միշտ ... Լսում եք, լեյտենանտ... Ի՞նչ սարսափ...

ԲՈՍԿԱՐԵՆ. Յավալի անհրաժեշտություն, տիրուհի... Ի դեպ, չպիտի աչքաթող անել այն հանգամանքը, վոր խոշտանգումը գործադրում է վոչ թե ֆրանսիական հանրապետական իշխանությունը, այլ իրենց, տեղական արդարադատությունը...

ՉՈՅԱ. Այո, իհարկե: Փառք աստուծո, մենք ֆրանսիացիներս բարբարոսներ չենք... Այդպես, հարցը նրանումն է, վոր իմ ընկերուհին նոր է յեկել Փարիզից և մինչև այժմ առիթ չի ունեցել այդպիսի բան տեսնելու...

ԿԼՈՒ. Իսկ դուք միթե տեսել եք...

ՉՈՅԱ. Յես յեթե չեմ ել տեսել, սակայն լսել եմ: Արդարադատության մանդարինի տունը մեր տան մոտ է: Յերբեմն կողքով անցնելիս այնպիսի ճիչ է լսվում, վոր մարդու արյունը սառչում է յերակներում...

ՆԱՆՏԵՅԼ. Ի՞նչ հետաքրքիր է... (Հանկարծ զգալով սխալը) Ի՞նչ սարսափ...

ՉՈՅԱ. Ինչ վերաբերում է ինձ, վեպ եմ գրում չինական կյանքից, ուսումնասիրում եմ ամեն տեսակ կենցաղային գծեր տեղական կոլորիտի համար:

ԲՈՍԿԱՐԵՆ. Հասկանում եմ, տիրուհի...

ՉՈՅԱ. Մի խոսքով, դուք դեմ չե՞ք լինի, յեթե հարցաքննության ժամանակ մենք ներկա գտնվենք...

ԲՈՍԿԱՐԵՆ. Դարավանդում... Յես կհրամայեմ աթոռներ դնել և զովացուցիչ ըմպելիքներ պատրաստել...

ՉՈՅԱ. Վոչ, շնորհակալ ենք... Ըմպելիք հարկավոր չե և... Ավելի լավ է, մենք այստեղից կդիտենք...

ԲՈՍԿԱՐԵՆ. Հասկանում եմ: Դա այնքան ել պաշտոնական չե,

յեթե կարելի յես այսպես արտահայտվել: Հասկանում եմ... Խնդրեմ... Կողջ շենքը ձեր արամադրության տակ է: Տնորինեցեք, ինչպես հարմար կզդաք ձեզ...

ՆԱՆՏԵՅԼ. Շնորհակալ եմ... Յեթե դուք Փարիզ գաք, խոստանում եմ ձեզ համար տոմս գրանել, վոր թատրոնի համար կամենաք: Իմ ազգանունը Նանտեյլ է, Ժորժետտա Նանտեյլ: Ծառայում եմ թատրոնում: Ճշմարիտ է, յերկրորդական դերեր եմ խաղում... սակայն թատրոնական աշխարհում մեծ ծանոթություններ ունեմ:

ԿԼՈՒ. (Չոլայիմ) Ինչ ավելորդ շաղակրատում է նա...

ՉՈՅԱ. Դուք, կարծես, խանդում եք:

ԿԼՈՒ. Յես արդեն ասել եմ, վոր այս ամբողջ ֆանտազիան ինձ առանձնապես դուր չի գալիս:

ՉՈՅԱ. Ինչո՞ւ... Չեմ հասկանում ինչու մի փոքրիկ զվարճություն չպատճառել խեղճին, վորը ախրում է զվարճություններից զուրկ այս գավառական փոսում...

ԿԼՈՒ. Ասենք, դուք ել դեմ չե՞ք այդպիսի զվարճության...

ՉՈՅԱ. Հավանական է... Այստեղի կլիման մեզ, սպիտակներին հարկադրում է շատ անստուգյալներ անել...

ԿԼՈՒ. Սիրելիս, դուք միշտ մի փոքր սաղխատկա յեք յեղել: Կլիման այստեղ գործ չունի:

ՉՈՅԱ. Այո... Բայց դա չեր խանդարում ձեզ սիրել ինձ, վորչափ հիշում եմ...

ԿԼՈՒ. Իրոք: Դուք շատ լավ հիշողություն ունիք...

ՉՈՅԱ. Գուցե ավելի լավ, քան ձերը:

ԿԼՈՒ. (Ծաղրական). Յես չափազանց յերջանիկ եմ...

ՉՈՅԱ. Ինչ արած... անկեղծ կլինեմ... Մի վախեցեք, վոչ վոք չի լսի, այդ շեկ մանկիկը բոլորին իր շուրջն է հավաքել: Առավել լավ: Կլոդ... խոստովանեցեք, վոր դուք իմ պատճառով եք յեկել... Յերկու տարի մենք չենք տեսնվել: Դուք այն ժամանակ յերելիս եյիք, — բայց և այնպես յես ձեզ չեմ մոռացել, չեմ կարողացել մոռանալ: Յես, վոր սովոր եմ տղամարդկանց փոխել ավելի հաճախ, քան իմ ձեռնոցները: Յերբ յես իմացա, վոր դուք գալիս եք ձեր հոր հետ... Կլոդ...

ԿԼՈՒ. Լոնցեք... Նրանք կլսեն...

ՉՈՅԱ. Յես խանդում եմ ձեզ խելագարի նման: Յեթե դուք մտածում եք Նանտեյլի յետևից ընկնել, ապա... Չզուլացեք... Դուք ինձ ճանաչում եք, յես ամեն բանի ընդունակ եմ...

ՆԱՆՏԵՅԼ. (մտնեալով) Ձոյա, սիրելիս, յես այնուամենայնիվ մի փոքր հրասաթափված եմ: Այստեղից այնքան ել լավ չե յերևա:

ԿԼՈՒԳ. Ներեցեք, հո չեյի՞ք ցանկանա դահիճի կողքին կանգնած լինել:

ԲՈՍԿԱՐԵՆ. Յես ձեզ նույնիսկ խորհուրդ կտայի հարևան սենյակն անցնել: Նախ, վոր դուք չեք կարող դարալանդում գտնվել, և ապա, այստեղ թե այնտեղ, արդեն եյական չե:

ՆԱՆՏԵՅԼ. (Լացալուճած) Ա՛յ, տեսնում եք...

ԿԼՈՒԳ. Ինչո՞ւ, պարոն դիվանապետ:

ԲՈՍԿԱՐԵՆ. Գնապետը հարցաքննության ժամանակ ներկայ չե լինելու: Յես հավատացած չեմ, վոր նա բարեհաճ կվերաբերվի կանանց ներկայության այստեղ, զբասենյակում, այսպիսի ժամանակ: Դուք չվախենաք, թե...

ԿԼՈՒԳ. Ֆրանսիական սպան վոչինչ չի վախենում, պարոն...

ԲՈՍԿԱՐԵՆ. Ո՛ր, իհարկե... Ինչպես և Ֆրանսիական զինվորը: Յես պատիվ եմ ունեցել ծառայելու զաղութային հետևազորում (Շեռակի նայում ե նրա աչքերին: Դադար):

ԿԼՈՒԳ. Տվեք ձեր ձեռքը: Դուք քաջն եք:

ԲՈՍԿԱՐԵՆ. (Բարեհամբույր) Իսկ դուք դուրսբորբոք, պարոն լեյտենանտ... Դուք ձեր հոր արժանավոր ոգնականը կլինեք:

Դալիս եմ սերժանտ Տի-Ա. Թ գ ը յեվ յերկու միլիցիաներ, վորո՞՞ք առաջնորդում եմ կապկապված գերուն:

Տի-ԱՆԳ. Պատիվ ունեմ ներկայանալ, պարոն դիվանապետ: Հրամայված ե գերուն այստեղ բերել:

ԲՈՍԿԱՐԵՆ. Գիտեմ, գիտեմ... Շատ լավ... Թանկագին հյուրին այստեղ սպասում են անհամբեր:

Տի-ԱՆԳ. Շտապեցինք, վորչափ հնարավոր եր, պարոն դիվանապետ:

ՆԱՆՏԵՅԼ. Ո՞վ ե սա... Ի՞նչ սարսափ...

ՎԻԼՅԵՆ. Սա պիրատ ե, տիրուհի: Դերված պիրատ, Պանդիս ավազակախմբից:

ԿԼՈՒԳ. Նրա տեսն այնքան ել ուզմական չե:

ԲՈՍԿԱՐԵՆ. Ո՛ր, դրանք շատ փորձառու զերասաններ են... Ի՞նչ ես այդպես խելոքացել, սիրելիս: Միևնույն ե, դա քեզ չե ոգնի:

ՆԱՆՏԵՅԼ. Սրան պիտի տանջեն... Ի՞նչ սարսափելի տեսն ունի... Կարելի՞ յե շոշափել նրան...

ԿԼՈՒԳ. Յերեխայություններ մի արեք:

ՆԱՆՏԵՅԼ. Ինչո՞ւ: Ձե՞ վոր նա կապկապված ե: Ի՞նչ աչքեր են... Կարծես դայի աչքեր լինեն... Յե՞վ բոլորովին մերկ ե... Գիտես, Ձոյա, նա վատ կազմվածք չունի: Իսկական արձան: Լուրջ... Թվում ե, յեթե մատով խփես — կփշրվի...

ՄԱԺԵՐՈ. Խորհուրդ չեմ տա, տիրուհի: Այս դեերը յերբեմն ո՞՞՞ք ավելի վատ են խայթում:

ԲՈՍԿԱՐԵՆ. Տի-Անգ, դու ստորագրություն ես ուզում:

Տի-ԱՆԳ. Ինչպես կարգն ե, պարոն դիվանապետ:

ԲՈՍԿԱՐԵՆ. Դա, իսկապես սաստ, մեր գործը չե... Թող ստորագրի Լի-Տուռնզը... Դուք սրան առայժմ տարեք դարավանդ, մանդարինը հիմա կզա... Լավ հսկեցեք, լսում եք:

Տի-ԱՆԳ. Կարելի՞ յե սյունից կապել:

ԲՈՍԿԱՐԵՆ. Այո, այդպես ավելի ապահով կլինի: (Պիրատին) Ինչպե՞ս ե անունդ:

Պիրատ. (Լուում ե):

ԲՈՍԿԱՐԵՆ. Համբացել ես, այո: Ավելի վատ, սիրելիս, ավելի վատ... Քեզ կստիպեն խոսել... Բլբուլ կզառնաս...

ՆԱՆՏԵՅԼ. Ի՞նչ սարսափ...

Պիրատին տամում եմ:

ԲՈՍԿԱՐԵՆ. (Կլողին) Յե՞վ այդպես, դուք վորոշել եք մնալ այստեղ...

ԿԼՈՒԳ. Հըմ... Նրանք անպայման մյս սենյակով պիտի անցնեն:

ԲՈՍԿԱՐԵՆ. Վոչ, կարող եմ ձեզ նման, դարավանդով զար: Հավանական ե այստեղ չմտնեն նույնիսկ... Բայց դա միևնույն ե, զբասենյակն այստեղից պարզ յերևում ե...

Յերկու սուրհանդակները դարավանդ եմ քաշ տալիս մի ակազին բազկաթառ, վորի մեջի քանդակը նման ե վիշապի:

ՆԱՆՏԵՅԼ. Տեսեք, ի՞նչ հետաքրքիր ե: Ո՞ւմ համար ե: Կերճն պիտի նստացնեն նրա վրա:

ՖՐԵՆԵԼ. Վոչ, տիրուհի, այդպիսի պատվի այդ անպիտանն արժանի չի լինի:

Ծիծաղ:

ԲՈՍԿԱՐԵՆ. Դա արդարադատության մանդարինի համար ե, տիրուհի, մանդարին Լի-Տուռնզի համար, վորը հարցաքննելու յե: (Կլողին) Այնտեղ, կողքին հարժար սենյակ կա: Այնուամենայնիվ յես ձեզ խորհուրդ եմ տալիս անցնել այնտեղ:

ԿԼՈՒԳ. Դուք կարծում եք... Յես, հասկանալի յե, չեմ վախ-

նում, սակայն չեյի կամենա ձեզ համար անախորժ դրությունս
ստեղծած լինել: (Վնապիան) Գնանք: Այնտեղից ել կերեալ...

Բ ո ս կ ա ր Ե ն ք, կամայք յեվ Կ լ ո դ ք անցնում են միջին սեմյակը:
Պաշտոնյաները ծիծաղում են

ՄԱԺԵՐՈ. Պարոնայք, այ քեզ նոմեր: Ինձ թվում է, վոր մենք
կունենանք ներկայացում ինտերմեդիայով...

ՎԻԼՅԵՐ. Բայց ինչ կին է... ինչ կին... գրողը ասնի... Կորա...
խորտակվեցի... Սիրահարված եմ...

ՖԻՆԵՆԼ. Ձեյի ցանկանա այդպիսի տիկինների կավալերը
լինել: Այժմ նրանց ուժով ել հեռացնել չի լինի: Իսկ յեթե դահիճը
հողմի, նրանք ուրախությամբ կփոխարինեն նրան:

Լ ի -Տ ու ո ճ ք ք մտնում է ատից: Հագել է մանգաթիմի համ-
դիավոր հագուստ:

ԲՈՍԿԱՐԵՆ. (Նեսա է գալիս) Պարոն Լի-Տուռնոյ, վողջույն:
Մենք ձեզ վաղուց սպասում ենք:

Լի-Տուռնոյ. Ներողություն եմ խնդրում, պարոնայք: Մի փոքր
ուշացա: Ո՛ր, ինչ մաքրություն: Կարելի յե կարծել, վոր մենք
հանրապետության նախագահի ծննդյան տոնն ենք կատարում:
Պարոն Ռանցը դեռ չի՞ յեկել: Պարոնայք, յես դեռ պատիվ չեմ
ունեցել շնորհավորելու ձեզ պարլամենտական հանձնաժողովի
լիազորի գալստյան անթիվ: Չափազանց հաջող ընտրություն
է: Հավատացած եմ, վոր այդ ավազակի անկարգությունները
շուտով վերջ կունենան...

ՄԱԺԵՐՈ. (Ֆրենկիին) Լեղու յեմ ասել է... Չես կարող հաս-
կանալ թվ է ավազակը և թե՛ անկարգություններ վերջ կունեն-
նան — պիրատի, թե՛ զնդապետի...

ՖԻՆԵՆԼ. Սատանան գիտե ինչ ունի նա իր մտքում: Նահան-
գապետության բոլոր մանդարիններից, իմ կարծիքով, սա ամենից
անվստահելին է...

ՎԻԼՅԵՐ. (Նայում է դարավանդի կողմը) Դալիս են, գալիս են...

ԲՈՍԿԱՐԵՆ. Պետք է դիմավորել: Դե, պարոնայք... Ուշադրու-
թյուն: Մի մոռացեք, վոր մեզանից յուրաքանչյուրը պետք է...

Բոլորը դուրս են գնում դարավանդ: Բեմը դատարկվում է
Չախից գողումի դեպի սյուների կողմ են անցնում Դ ի ո գ ք
յեվ Վ յ Ե ն ք: Նայում են վզերը յերկարած: Դարավանդում
ձայներ:

ԴԻՆԳ. (Կամացուկ) Կապկապած է... Տեսնում ես...

ՎՅԵՆ. Տեսնում եմ:
Դադար:

ԴԻՆԳ. Նա վոչինչ չի ասի:

ՎՅԵՆ. Չի ասի, չե:

ԴԻՆԳ. Ավելի շուտ կմեռնի:

Դադար

ՎՅԵՆ. Նա վոչինչ չգիտե:

ԴԻՆԳ. Գիտե, բայց քիչ բան: Յեթե իմանա ել, միևնույն է,
չի ասի:

ՎՅԵՆ. Նրա յեղբայրն է:

ԴԻՆԳ. Կ՞վ...

ՎՅԵՆ. Դահիճը:

ԴԻՆԳ. Այուլամենայնիվ կտանջի:

ՎՅԵՆ. Այնուամենայնիվ կտանջի: (Դադար) Նա կմեռնի, յեթե
չասի:

ԴԻՆԳ. Յեթե ասի, նույնպես կմեռնի: Վիշապը կպատժի նրան:

ՎՅԵՆ. Նա վիշապից չի վախենում: Նա վախենում է Պանդից:

ԴԻՆԳ. Մ՛ըս... Հարկավոր չե այդ անունն այստեղ արտա-
սանի: Պատերն ականջներ ունեն:

ՎՅԵՆ. Ֆրանսիական ականջներ...

ԴԻՆԳ. Յերկար... (Յեղիւսով ել կամացուկ ծիծաղում են):

ՎՅԵՆ. Մարդ է գալիս այս կողմ...

Միջին դռներից յերեկում են կամայք յեվ Կ լ ո դ ք: Մեկը մյուսի
յետեվից գգուշորեն մտնում են սյուների: Սուրհանդակներ
անհայտանում են:

ՆԱՆՏԵՅԼ. Իհարկե, այստեղից ավելի լավ է յերևում:

ԿԼՈՒ. Բայց այստեղ ավելի հանգիստ պետք է մնալ: Հիացեք
և սքանչացեք լուռ, առանց բառերի...

ՆԱՆՏԵՅԼ. Ինչո՞ւ... Նրանք հետո յեն... Յեվ խիստ զբաղված
են: Ա՛խ, ձեր այդ յերկարավոր հայրիկը... Նա ծածկում է ին-
ձանից դերուն...

ԿԼՈՒ. Խնդրեցեք մի կողմ քաշվի...

ՆԱՆՏԵՅԼ. Շնուտ են սկսելու... Չե՞ վոր նա հրաժարվեց պա-
տասխանել... Նա չի խոսի... Ինչո՞ւ իզուր ժամանակ կորցնել:


ՉՈՅԱ. Իսկույն կսկսվի... Տեսնում ես... Նրան գետին են
գլորում...

ՆԱՆՏԵՅԼ. Նա նույնիսկ չի յել դիմադրում...

ԿԼՈՒ. Հավանորեն ֆաթալիստ է...

ՆԱՆՏԵՅԼ. Թողեք կատակներ: Այդպիսի բոպեյի՛ն... Ի՞նչպես
չեք ամաչում...

ԷԳԿԵ



ՉՈՅԱ. Տեսնում ես... տեսնում ես... այդ փայտն անց են կացնում հանգուցի տակ, ազդրերի վրա: Պարանն այնքան են վորրում, վոր փայտը մտնում է մսի մեջ: Կաշին ուռչում է, կապտում, հետո սկսում ճաքճաքել...

ԿԼՈՒ. Ինչ բավական լավ ծանոթ եք գործի տեխնիկային...

ՉՈՅԱ. Գիտեմ, այո: Ինչ ասել են...

Իարավանդից հենում է ցավի խուլ մտչյուն:

ՆԱՆՏԵՅԼ. Լսում եք, լսում եք... Ի՞նչ սարսափ...

ԿԼՈՒ. Յե՛վ ի՞նչ զզվանք... Վայրենիները տանջում են միմյանց, իսկ մենք, կուլտուրական Ֆրանսիացիներս խրախուսում ենք նրանց... հանուն իրենց ազգային ազատութեան... Վնչ, զբոզը տանի, ավելին — մենք հարկադրում ենք նրանց այդ բանին... Առաջին անգամ կյանքուժս յես ամաչում եմ իմ ուսադիրներից...

ՉՈՅԱ. Ձեր հայրիկին ասացեք այդ...

ԿԼՈՒ. Թերևս բավական է... ավելի լավ է զնանք:

ՉՈՅԱ. Ձեր ներվերը չափից ավելի թույլ են:

ՆԱՆՏԵՅԼ. Գնա՛լ, մի՛թմ... խելագարվել եք... Վոչ մի պայմանով...

ՉՈՅԱ. Տեսեք, ինչպես գալարվում է նա... Կլո՛ղ, տվեք ինձ ձեր ձեռքը: Շնուտ: Կլո՛ղ, ասա, վոր դու ինձ սիրում ես... Ժողովետտա, դա քեզ չի վերաբերում... Կլո՛ղ, դե՛, կեղծիր... Ա՛խ, յեթե դու իմանայիր...

Յերկարատե՛վ խեղդուկ մի:

ԿԼՈՒ. Ձեզ դուր է գալիս սիրային դուետ յերգել այս հառաչանքների նվագակցութեամբ...

ՆԱՆՏԵՅԼ. Տեսեք, ծածկոցը վերցնում են դեմքից: Մանդարինը եշան արեց...

ՉՈՅԱ. Հավանորեն նա վորոշել է խոսել...

ՆԱՆՏԵՅԼ. Մենք իսկույն կտեսնենք նրա դեմքը: Յես արդեն տեսնում եմ: Ա՛յ... (Սարսափի նիչ է արձակում: Իտրավանդում աղմուկ):

ԿԼՈՒ. Յես այդպես ել գիտեյի... Գրողը տանի...

Շտապ ներս են գալիս Բ ո ս կ ա բ ե ռ Ե, Ռ ա ն ց Ե, յե՛վ Ռ ա Վ Ե ճ ա Ե յ Ա Ե: Գնդապետը 65 տալեկամ ծերունի յե: Դոն-Քիշոտի բնորոշ կերպարանքով՝ շատ բարձրահասակ, նիսար, խոշոր աչիտակ բիսեր: Ռ ա ն ց Ե փոքր է, կոքացած, աչքերին կրայի վստիորից շքամակով ակնոց:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Ի՞նչ է նշանակում այս... Ո՛վ ճչաց... Ինչպե՞ս ՚ն ընկել այստեղ այս կանայք... Ինչո՞ւ...

ՌԱՆՑ. Չոյա... Ի՞նչ գործ ունես այստեղ...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Պարոնս ուղիղենտ, ձեր ուշադրութեանն եմ հրավիրում այս անկարգութեան վրա:

ՌԱՆՑ. Գնդապետ, յես չգիտեյի... Ինձնից անկախ...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Ափսոս, վոր դուք չգիտեք ի՞նչ է կատարվում ձեր զբոսանյակում: Իա շատ վատ պրակտիկա յե: Դիվանապետ Բոսկարեն, հավանորեն դուք նույնպես չգիտեյիք...

ՉՈՅԱ. Պարոն, ներողութեան եմ խնդրում, Բոսկարենը զիջեց իմ թախանձանքին: Յես չգիտեյի, վոր ուղիղենտի կլինն իրավունք չունի...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Տիրուհի, խնդրում եմ անմիջապես թողնել պաշտոնական հիմնարկութեանը:

ԿԼՈՒ. Հայր...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Լեյտենանտ Ռավենշտեյն, այս գործին մասնակից լինելու համար դուք կբանտարկվեք յերեք օր:

ԿԼՈՒ. (Բարբոսվելով) Գնդապետ, յես կկամենայի...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Իուք հակաճանոթ եք ձեր ավագին, ձեր հրամանատարին... Ութ օր բանտարկութեան պահանջում... Յետ դարձ, ձնիս, այլապես կհրամայեմ ձեզ պահակներով տանել:

ՉՈՅԱ. Գնդապետ, դա անարդարութեան է... Լեյտենանտը վոչ մի հանցանք չունի: Յես եմ միայն...

ՌԱՆՑ. (Քիչ է մնում լաց լիմի) Չոյա, լուր... Միշտ դու... դու... Ի՞նչ պատճառով միայն անախորժութեաններ են առաջանում...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Պարոնս ուղիղենտ, խնդրում եմ ձեզ վերադառնալ ելի հարցաքննութեանը: Տիրուհի, ցավում եմ, սակայն պիտի ասեմ, վոր ձեր վարմունքն արժանի չի Ֆրանսիացի կնոջ: Իուք պիտի ամաչեյիք թեկուզ տեղական աղմինխտրացիայից: Այստեղ թատրոն չե: Հավատացած յեղեք, վոր յես ուղիղենցիայի մեջ նման բարքերն արժատախիլ կանեմ: Այսօր իսկ մանրամասն զեկուցում կուղարկեմ գեներալ նախնազապետին այս բոլորի մասին: Անկարգութեանը մասնակից բոլոր պաշտոնատար անձինք արժանի պատիժը կկրեն:

Իարավանդում աղմուկ: Ներս է վազում Վ ի լ յ Ե Բ Ե, քաշկե-նակն այտին սեղամ:

ՎԻԼՅԵՐ. Գրողը տանի... Անզգամ... Անիծյալ անպիտան...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Ի՞նչ է նշանակում այդ... Պարոնս արձանագրող, ձեր տեղն այստեղ է...

ՎԻԼՅԵՐ. Ներողութիւն եմ խնդրում, պարոն գնդապետ, բայց կարծեմ, հարցաքննութիւնը վերջացած է: Այդ ավագակը նշան արեց, թե ուզում է խոսել... Յես թեքվեցի նրա կողմը, իսկ նա... անդամբ... կծեց լեզուն և այրունախառն թքեց ուղիղ յերեսիս...
ՆԱՆՏԵՑԼ. Ի՞նչ սարսափ...

ԲՈՍԿԱՐԵՆ. Սատանան տանի սակայն... Ա՛յ քեզ անպիտան...
ԼԻՏՈՒՈՆԳ. (Նետր է գալիս) Դժբախտաբար, այլևս նա չի կարող խոսել: Հազվագուտ դեպք է... Իմ պրակտիկայում առաջին անգամ... Լեզուն կտրված է, կարծես մկրատով... Նա ընկած է ուշաթափ: Պարոն գնդապետ, խոնարհաբար խնդրում եմ հետագա հրահանգներ...

ՈՍՎԵՆՇԵՅՆ. Այո... (Դադարից հետո) Դժվար պայքար է լինելու... Ինչ արած, պարոնայք... Ավելի վատ...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՅԵՐԿՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Սենյակ վարչութիւն մանդարին Կուանդ-Սինգի տանը, վորը միաժամանակ և սեղանատուն է և ընդունարան: Բեմը շատ խորը չէ: Յերկրորդ պլանում, ռամբլային զուգահեռ բեմը հատվում է հղկած սև պատով: առանց լուսամուտների և դռների, ծածկված սաղափի և վոսկու դրվագներով: Ձախ կողմը դուռ գեպի այլ սենյակներ, աջ՝ բաց կամար դեպի թոշին: Վոսկեղոծ կարասի, դաշնամուր, բաղձոցներ, սեղաններ՝ վրան ալբոններ: Կահավորութիւնը յեվրոպական է: Տեղական է միայն շիրման՝ մետաքսից ասեղնազործած և անաղին ճենապակեզ վազաներ՝ ծաղիկներով լիքը: Յերեկոյն յե, վառվում են ելեկտրական յամպերը:

Կ ա ռ ա ն գ-Ս ի ն գ ը յ ե Վ Ո ա-Շ Ե ն Ը — յերկուսն ել յեվրոպական եագուստով: Ո ա-Շ Ե ն Ը փոքրիկ, գեղեցիկ տիկնիկի նման է: Կ յ լ ո գ Ո ա Վ Ե ն շ տ Ե յ ն Ը այցելութիւնների շփեազուստով է: Սպասավորները քեյ են մատուցում:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Յե՛վ այդպես, պարոն լեյտենանտ, մեր գա՛վառական անկյունը ձեզ վրա աջնբան ել վատ տպավորութիւն չի թողել: Յես և կինս շատ ուրախ ենք...

ԿԼՈՒԳ. Ո՛ր, յես հիացած եմ, ուղղակի հիացած... Ձեմ թագցնում, յերբ հայրս հայտնեց, վոր ինձ իր հետ վերցնում է Հեռավոր Արևելք, յես սարսափ գգացի: Տոնկինը պատկերացավ ինձ միայն կապիկներով և վագրերով բնակեցրած: Յես դառնազին վողբացի իմ խորտակված կյանքը, մտածելով, վոր իմ ունեցած մեղքերը՝

Իսկ նրանք, պիտի խոստովանեմ, բավական շատ են՝ այդչափ խիստ պատժի արժանի չեն:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. (Ժպտալով) Ձինական հին լիմասութիւնն ասում է՝ «Վստահիր մեծերին, վորովհետև նրանք գիտեն ինչ են անում»: Ձեր հայրը, անտարակույս, լավ գիտեր, վոր Տոնկինը բնակեցրած չէ միայն կապիկներով և վագրերով, թեպետ, ճշմարիտ է, թե մեկից և թե մյուսից այստեղ բավական շատ կա:

ԿԼՈՒԳ. Ծերունին, չպետք է ուրանալ, այնուամենայնիվ սիրում է ինձ: Մենք հաճախ ենք կովում: Թեկուզ հենց այդ անմիտ քանտարկութիւնը, վորից նա ինձ վոչ մի որ չէր ջեց: Բայց և այնպես, նրա հետ մենք բարեկամ ենք: Նա տաքարյուն է, գյուրագրգիւ, համառ, սակայն չե՞ վոր յես նույնպես այդպես եմ:

ՈՍ-ՇԵՆ. (Ժպտալով) Այն տարբերութիւնը միայն, վոր այստեղի կանայք նրանից ավելի յեն վախենում, քան ձեզանից:

ԿԼՈՒԳ. Կանայք... վորքան յես գիտեմ, նա կանանց հետ յերբեք հաշտ չէ: Նրա միակ հետաքրքրութիւնը յեղել է ծառայութիւնը: Յեթե նա ապրելիս լիներ Նապոլեոնի ժամանակ, մարշալութիւն զավագանն անպայման նրան կպատկաներ: Մանավանդ... նա հին կոլոնիստ է...

ՈՍ-ՇԵՆ. Իսկ դժբ...

ԿԼՈՒԳ. Յես... Յես փարիզեցի յեմ, տիրուհի, փարիզեցի՝ վոտքից գլուխ:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Յեթե չեմ սխալվում, դուք ուղղակի Փարիզից եք գալիս:

ԿԼՈՒԳ. Մենք Փարիզում մնացինք յերկու շաբաթ, իմ փոխադրման խնդիրը ձեռնարկելու համար: Մեր գունդը կանգնած եր Մարրաքեշում: Իսկ Ալժիրը... աստված իմ... Ալժիրն իսկական Զիրանսիա յե...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Նույնիսկ մյս տունը:

ԿԼՈՒԳ. Դուք իրավացի յեք: Ձեր տանը Ասիան համարյա չի գգացվում: Յեթե նկատի չառնենք այս պատը, վորը, ճշմարիտ է, շատ գեղեցիկ է և որիցինալ...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Փոքրիկ տուրք տեղական պայմաններին, պարոն լեյտենանտ: Ուրիշ կերպ չի կարելի: Քանի վոր յես գրավում եմ վարչութիւն մանդարինի պոստը, չի կարելի ազգային հն ա վանդ սովորութիւններին Փանատիկ կողմակիցներին գրգռել: Սակայն, յես յերազում եմ կառուցել մի փոքրիկ դղյակ, ուր

նույնիսկ այս եկզողիկան չլինի... ուր մարդ դպա իրեն վոչ թե Սոնտայում, այլ կապուցիւններ ըուլվարում...

ԿԼՈՒԻ. Դուք սիրո՞ւմ եք Ֆրանսիան, պարոն խորհրդակիւն:
ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Մի՞թե այս սենյակը բազմախոս ապացույց չի իմ ճաշակի և հակումների... Նայեցեք ձեր շուրջը. կարող եմ պարծենալ, վոր այստեղ շատ քիչ տեղական իրեր կան: Այստեղ ամեն ինչ, սկսած դաշնամուրից և վերջացրած մոխրամանով, Փարիզից է բերված: Յես և կինս շարունակ ֆրանսերեն ենք խոսում:

ԿԼՈՒԻ. Յե՛վ պետք է խոստովանել, դուք հրաշալի եք խոսում: Համարյա առանց ակցիւնախ: Իսկ դուք, տիրուհի, — յերգվում եմ, վոչ մի անդ չեմ լսել այդպիսի սքանչելի, այդպիսի յերաժշտական և քաղցրահնչյուն արտասանություն: Դուք Ֆրանսիայում յերկմր եք ապրել:

ՈՒՇԵՆ. Յես... աստված իմ... յերբեք չեմ յեղել այստեղ... Իմ ամուսինը յերկու տարի առաջ յեղել է Փարիզում, իսկ յես յերբեք չեմ հեռացել Սոնտայից:...

ԿԼՈՒԻ. Ափսո՞ս... Մեր սալոններում դուք իսկական սենսացիա կառաջացնելիք:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. (Հիացմունքով). Դուք շատ սիրալիր յեք, պարոն լեյտենանտ...

ՈՒՇԵՆ. (Կամիկական լքուրքամբ) Իսկապէ՛ս: Յես այնպես ծիծաղելի կլինեմ... Եկզոտիկ խաղալիք...

ԿԼՈՒԻ. Տիրուհի, դուք վատ կարծիք ունեք ֆրանսիական ճաշակի մասին:

ՈՒՇԵՆ. Ընդհակառակը, շատ լավ... Այդ պատճառով ել կարծում եմ, վոր դուք չափազանցում եք... Յերբ յես տեսնում եմ, որինակ, տիկին Ռանցին, ինձ թվում է, վոր յես փոքրիկ, ծիծաղելի մի վայրենի յեմ: Նա, ըստ յերևութիւն, Փարիզում մեծ հաջողություն է ունեցել: (Ահնդես նայում է նրան):

ԿԼՈՒԻ. Հավանական է: Ինչո՞ւ վոչ: Նա գեղեցիկ է, նուրբ... Յես նրան, իղեպ, վաղուց եմ ճանաչում: (Շփոքվում է):

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. (Վեր է կենում սեղից) Ներողություն եմ խընդրում, պարոն լեյտենանտ, յես ֆինանսների մանդարինի մոտ պիտի անցնեմ... Գործեր, գործեր... Մանր, զավառական, բայց և այնպես գործեր... Յես ձեզ հրաժեշտ չեմ տալիս, ճշմարիտ չե՛մ... ՈւՇԵՆ, բարեկամս, աշխատեցեք, վորպեսզի հյուրը չձանձրանա ձեզ հետ: (Գնում է):

ԿԼՈՒԻ. Յես անհարմար եմ զգում ինձ: Յես ծանոթ չեմ տեղական սովորություններին... Դուցե յես նմայնպես պիտի հեռանայի...

ՈՒՇԵՆ. Իսկ ի՞նչպես կվարվելիք դուք Փարիզում...
ԿԼՈՒԻ. Ո՛ր, Փարիզում... Յես կմնայի...

ՈՒՇԵՆ. Ուրեմն, դուք ձեզ պետք է զգաք, ինչպես Փարիզում... և վարվեք նույն ձևով:

ԿԼՈՒԻ. Իսկ գիտե՞ք ինչ կնշանակեր այնտեղ, յեթե յես մնայի:
ՈՒՇԵՆ. Վոչ: Ասացեք, ի՞նչ կնշանակեր:

ԿԼՈՒԻ. Այդ կնշանակեր... վոր տանտիրուհին ինձ շատ է դուր գալիս: Յե՛վ վոր ինձ համար ցանկալի յե նրա հետ լինել առանձին...

ՈՒՇԵՆ. (Պարզամիտ). Իսկ այդ խոսքերին ի՞նչ կպատասխանեք ֆրանսուհին...

ԿԼՈՒԻ. Դուք չգիտե՞ք...

ՈՒՇԵՆ. Յես ձեզ նախազգուշացրի, վոր յես փոքրիկ վայրենի յեմ:

ԿԼՈՒԻ. Ճիշտ չե, դուք գիտեք... ձեր աչքերը ծիծաղում են...
ՈՒՇԵՆ Իմ աչքերը... Նրանք այնպես ծիծաղելի յեն, նեղ...
Ուրեմն ի՞նչ կպատասխանեք ֆրանսուհին:

ԿԼՈՒԻ. Յեթե յես նրան դուր չգամ, նա կբարկանա... կամ, նույնիսկ, չի բարկանա, այլ ուզողի կասի՝ պարոն, դուք դուր ժամանակ եք վատնում...

ՈՒՇԵՆ. Յես ել այդպես կասեմ:
ԿԼՈՒԻ. (Տեղից յեղնում է սառն). Իրո՞ք...

ՈՒՇԵՆ. Իհարկե: Յես անհետաքրքիր ասիացի կին... Ձեզ եմ համար ինձ հետ հետաքրքիր չի կարող լինել: Դուք զբաղեցնում եք ինձ միայն քաղաքավարությունից զրզված...

ԿԼՈՒԻ. Դուք կսքեռություն ել գիտեք... Սքանչելի, Տիրուհի, յեթե դուք անկեղծ եք ասում, ապա սխալվում եք: Յես ինձ շատ լավ եմ զգում ձեզ հետ: Յես պատրաստ եմ անվերջ նայել ձեզ վրա, լսել ձեր ձայնը...

ՈՒՇԵՆ. Ուզո՞ւմ եք, յեզ ձեզ համար նվագեմ... Թեև վատ եմ նվագում, բայց և այնպես, դա ավելի լավ կլինի, քան իմ ձայնը: (Նստահեցնում է քերքում):

ԿԼՈՒԻ. (Մոտենում է ալիքի) Իսկ դուք չե՞ք ձանձրանա ինձ հետ:

ՈՒՇԵՆ. Չգիտեմ...

ԿԼՈՆ. (Յե՛ս էաւելելով) Չգիտե՞ք...

ՈՍ-ՇԵՆ. (Շարունակաւ ե)... Չգիտեմ, ի՞նչ կ'պատասխաներ իմ
տեղ ֆրանսուհին...

ԿԼՈՂ. Սատանան տանի... ի՞նչ կ'ին ե...

ՈՍ-ՇԵՆ Թեկուզ... տիկին Ռանցն, որինակ...

ԿԼՈՂ. Կրկի՛ն նա... Ազնիվ խոսք, յեթե յես հիմար լինեյի,
կենթադրեյի, վոր դուք խանդում եք ինձ դեպի նա:

ՈՍ-ՇԵՆ. Դուք հիմար չեյիք լինի: Նա ավելի հետաքրքիր է,
քան յես: Նա ձեզ դուր է գալիս...

ԿԼՈՂ. Ո՞վ ասաց ձեզ...

ՈՍ-ՇԵՆ. Յես այդպես եմ կարծում.

ԿԼՈՂ. Դուք սխալվում եք... Յես նրա հետ վաղուց եմ ծա-
նոթ: Սակայն ինչո՞ւ թագցնել... Այո, յես մի ժամանակ տարվե
եմ նրանով: Բայց այժմ այդ բոլորն անցել է, — այնքան հեռա-
վոր և այնքան անպետք, ինչպես հիշողութ՞յունը: Այժմ յես վոչ
վորքի մասին չեմ մտածում, բացի ձեզանից...

ՈՍ-ՇԵՆ. Սա... ահա սա, անշուշտ ձեզ դուր կգա... (Նվազում է):
Գեղեցիկ է, այո:

ԿԼՈՂ. Շատ: Ի՞նչ է այդ:

ՈՍ-ՇԵՆ. Լետտր դե Մանոն, Ժիլյեյի: Սա իմ սիրած կտորն է.
միաժամանակ վարվումն, քնքույր և արտում...

ԿԼՈՂ. Դուք ծանոթ եք Մանոնի պատմութ՞յանը:

ՈՍ-ՇԵՆ. Այո, յես կարդացել եմ արբանայր Պրեվոյի վեպը:
Յես նույնիսկ արտասովել եմ մի քիչ...

ԿԼՈՂ. Տեսնում եք, այ... Իսկ եկզոտիկ վիպասանները զըտ-
նում են, վոր յեվրոպացու և ասիացու հոգիները սարբեր են և
վոր նրանք յերբեք միմյանց չեն հասկանա:

ՈՍ-ՇԵՆ. Յես կարծում եմ կնոջ հոգին միշտ կհասկանա մյուս
կնոջ սերը և տառապանքը, ինչ գուցնի յել վոր լինի նա:

ԿԼՈՂ. Նաև տղամարդու սերը, այո...

ՈՍ-ՇԵՆ. (Նվազելով) Ո՞վ գիտե...

ԿԼՈՂ. Յես կամենում եմ իմանալ...

ՈՍ-ՇԵՆ. Ինչո՞ւ:

ԿԼՈՂ. Յես ձեզ ասացի...

ՈՍ-ՇԵՆ. Յես չեմ հավատում: Բոլոր կանանց...

ԿԼՈՂ. (Ընդհատելով), Ձեր փոքրիկ, փոքրիկ ձեռքերը...

ՈՍ-ՇԵՆ. ...միշտ նույնն են ասում...

ԿԼՈՂ. Ձեր աղաթյա աչքերը... Ձեր վարդի թերթերի նման

ալ շրթունքները... և այդ կապույտ յերակները քունքերի, վո-
րոնց մեջ հոսում է վաղեմի խորհրդավոր Ասիայի արյունը...

ՈՍ-ՇԵՆ. Դուք խանգարում եք ինձ նվազել, յես նոտաները
չեմ տեսնում:

ԿԼՈՂ. Ու-Շեն... թանկազի՛ն... սքանչելի՛... (Գրկում է նրան):

ՈՍ-ՇԵՆ. Յես նոտան չեմ տեսնում... (Յերկարատեղ համբույր):

ԿԼՈՂ. ... և յերաժշտութ՞յունն ընդհատվեց հանկարծ... (Համ-
բույր):

ՈՍ-ՇԵՆ. Բաց թողե՛ք... (Ազատելով նրա գրկից) Ա՛խ, ինչ
վատ է այդ... Ինչո՞ւ...

ԿԼՈՂ. Վորովհետև դուք սքանչելի յեք, յես ձեզ սիրում եմ (Կր-
կին ուզում է գրկել):

ՈՍ-ՇԵՆ. (Մեղմ, բայց նրամայակամ). Նստեցե՛ք հանգիստ: (Սո-
վառական տոնով) Յե՛վ այդպես, պարոն լեյտենանտ, դուք չե՞ք սի-
րում Մասսընեյին և գերադասում եք Դեբյուսին... Դժբախտաբար
յես չեմ կարող համաձայնվել ձեզ հետ ժամանակակից յերաժշ-
տութ՞յունն ինձ համար չափազանց...

Ներս եմ գալիս Ձայան յե՛վ Ռանցը:

ՉՈՅԱ. Թանկագինս, ներեցե՛ք, վոր մենք ներս մտանք առանց
զեկուցման: Ձեր սպասավորները չեն յերևում:

ՌԱՆՑ. Պարոն լեյտենանտ, դուք ե՛լ այստեղ եք... Շատ ու-
րախ եմ ձեզ տեսնելու... (Վողչումում են միմյանց):

ԿԼՈՂ. Այո, մենք յերաժշտութ՞յամբ եյինք զբաղված... Պարոն
խորհրդականը նոր միայն դուրս գնաց... Յես մի քանի բոպեյով
մնացի...

ՉՈՅԱ. (Սպանիչ անարբերությամբ) Իրո՞ք... (Նստում է) Ձեր
սպասավորներին բան է պատահել թանկագինս... Այդպիսով
ազատ կերպով ձեր հյուրասենյակը կարող է ներս մտնել ինքը
պիրատ Պանգր... Յե՛վ դուք նույնիսկ չեք կարող պատրաստվել
նրան ընդունելու, ինչպես հարկն է...

ՌԱՆՑ. Ո՞, տիկին Ու-Շենն այնչափ փարիզուհի յե, վոր յես
հավատացած եմ, կարող կլինի ամեն մարդու ընդունել ինչպես
հարկն է...

ՈՍ-ՇԵՆ. (Ժպտալով) Յես կարծում եմ, այո... կարող կլինեմ...

ՉՈՅԱ. Ինչ չափով փարիզուհի յե, կամ ինչ չափով չինուհի,
գուցե... Մեկը մյուսին արժե... Ճիշտ չե՛, սիրելիս...

ՈՍ-ՇԵՆ. (Նույն ժպիտով) Յեթե ձեզ հաճելի յե... (Ռանցին) Իսկ
սպասավորները, իրո՞ք, վերջին ժամանակները քանի գնում, սան-

ձարձակ են դառնում: Միայն մեզ մոտ չե այդպես: Տիկին Բոսկարենը և այլ տիկիները նույնպես զանգատվում են: Յես նույնիսկ չգիտեմ ինչի՞ն վերագրել դա...

ՌԱՆՑ. Բա... դա բնական է: Յերբ չորս կողմը խոսակցությունը միայն պիրատներին, այդ անընկճելի Պանզի մասին և, վորը սարսափ է ազգել նույնիսկ պարլամենտական հանձնաժողովին և վորին գաղութային իշխանությունն այնքան ժամանակ չի կարողանում վոչինչ անել... Բայց նա միայն մեզ համար և պիրատ և չարագործ, իսկ տեղացիները, վոր հակառակ արտաքին անձնվիրության, սրտի խորքում թշնամի յեն մեզ, նրան ընդունում են վորպես ազգային հերոս, զուցե և ազատարար...

ՌԱՇԵՆ. Դա միանգամայն հնարավոր է...

ՌԱՆՑ. Ճիշտ այդպես է, տիրուհի: Ներեցեք... մարդիկ իրենց լեզուն են կծում, կծում են վոչ թե առերևույթ, այլ բառի իսկական իմաստով, վորպեսզի կամքից անկախ դուրս կորզված և վոչ մեկ բառով չփնտռեն նրան... Դա մի բան արժե... Յես հավատացած եմ, վոր չկա վոչ մի գյուղացի, չկա արհեստավոր և նույնիսկ բանվոր, վորը չիմանա այդ Պանզի տեղը, չլինի նրա համախոհը, սակայն այդ դեղին պարոնները գերադասում են իրենց լեզուն կծել, վորովհետև Պանզը թարգման է հանդիսանում նրանց «ազատագրական» կոչված ձգտումներին... Պանզն անընկճելի յի, այն իսկ պատճառով, վորովհետև նա հենվում է ազգաբնակչության ամենալայն մասսաների վրա...

ՉՈՅԱ. Բարեկամս, մի վոզեւորվիր: Դու մոռացել ես, վոր սա, համենայն դեպս, Ֆրանսիացու տուն չէ: Դու այնքան ես զբաղված քո միջատներով ու թիթեռներով, վոր յերբեմն անզիտակցաբար կարող ես անտակտ գտնվել:

ՌԱՇԵՆ. Իմ ամուսնու համար այդ կշտամբանքն անհաճո կլինի: Միթե մենք Ֆրանսիացի չե՞նք, տիրուհի: Յեվ միթե Պանզն ինձ նույնպես թշնամի չէ, ինչպես ձեզ:

ՌԱՆՑ. Յես վստահ եմ, վոր այդ իրոք այդպես է: Յես, համենայն դեպս, այստեղ ինձ թշնամիների մոտ չեմ զգում: Իսկ ձեր կարծիքը, պարոն լեյտենանտ:

ԿԼՈՒ. Իմ կարծիքը... Իմ կարծիքը մի փոքր վերացական է և վերաբերում է ձեր մասնագիտության: Յես կարծում եմ, վոր անտակտ գտնվելու համար հարկ չկա միջատաբան լինելու:

ՌԱՆՑ. Յես վարժվել եմ, վոր ինձ ծագրեն և այլևս ուշադրություն չեմ դարձնում: Յես բարձր եմ կանգնած գրանից, բարեկամս...

ՉՈՅԱ. Հասցա ի՞նչ պետք է լինել: Իհարկե, վոչ սպա: ԿԼՈՒ. Ավելի շուտ, կին: Ասել այն, ինչ չպետք է ասվի, — դա յատուկ է կանանց:

ՉՈՅԱ. Բայց վոչ բոլոր կանանց, ճշմարիտ չէ: Կարծում եմ, յիվորպացի կանանց առավել ևս: Վորքան ինձ հայտնի յե, դուք «վաղեմի խորհրդավոր» Ասիայի կանանց անհամեմատ բարձր եք դասում:

ՌԱՇԵՆ. (Անգիտակցաբար) Ո՛, տիրուհի...

ՉՈՅԱ. Հավատացեք, սիրելիս, յես լավ գիտեմ ինչ եմ ասում: Այո, այո: Պարոն լեյտենանտ, մի վիճեք: Դուք շատ անգամ եք կրկնել ինձ այդ բանաստեղծական դարձվածքը: Ինչո՞ւ յեք այդպես հուզվում... Դուք, կարծես, նույնիսկ կարմրեցիք:

ՌԱՆՑ. (Միծաղելով) Բավական է, Չոյա:

ՉՈՅԱ. Յեվ յես չեմ մտածում հակաճառել ձեզ: Վերցնենք մեր սքանչելի տանտիրուհուն. միթե նա զարգացմամբ ավելի բարձր չէ, քան Ֆրանսիայում գավառական վորեւ պրեֆեկտի կին... Այնտեղ նա ուղղակի մի խղճուկ, գորշ արարած կլինի, վոր հնացած մոդայի հաղուտ է հագնում և բամբասանքներով եզրադրվում... Իսկ տիկին ՌաՇենը... Նա սքանչելի դաշնամուր է նվագում. — յես յերբեք չեմ լսել, որինակ, վոր ժիլլեյի յերաժշտական անարժեք մի կտորն արտահայտվի այդպիսի նուրբ նուաններով... (ՌաՇենը յեվ կողք հայացքներ են փոխանակում) Նա Ռենյե և Բողլեր է կարդում և, յես հավատացած եմ, հետաքրքրվում է նույնիսկ միջատաբանությամբ...

ՌԱՆՑ. Ճշմարիտ է, տիրուհի... Յես նույնիսկ չեյի կարող յենթադրել...

ՌԱՇԵՆ. Յես թիթեռնիկներ սիրում եմ... Նրանք այնպես գեղեցիկ են...

ՌԱՆՑ. Ավելի գեղեցիկ և հետաքրքիր, քան մարդիկ, տիրուհի: Իմ կարծիքով, յուրաքանչյուր կին պիտի սիրի բնությունը և նրա ստեղծագործությունները: Իսկ Չոյան միայն ծիծաղում է ինձ վրա...

ՌԱՇԵՆ. Իսկապես... Իսկ ինձ թվում եր, վոր տիկին Ռանցը նույնպես մի փոքր միջատաբան է... (Ռանցին) Չե՞ վոր միջատաբան լինել, նշանակում է խեղճ թիթեռնիկներին գնդասեղանների վրա խփել... (Կլոդին) Սիրո յուրատեսակ արտահայտություն, ճիշտ չէ...

ԿԼՈՒ. Վորոշ կանայք, հենց դա յեն սեր համարում...

ՉՈՅԱ. Այո, մենք յերբեմն անդուժ ենք լինում: Բայց աղան-
ժարդիկ ավելի վատ վիճակի մեջ են գտնվում... Նրանք ծիծաղելի
լին... Մանավանդ, յերբ գնդասեղի դեմ սուր են մերկացնում...
- Ներսե գալիս Կուսանգ-Սիգգը:

ԿՈՒԱՆ. ՍԻՆԳ. Պարոն ուղիղենտ... Տիրուհի... Ի՞նչ հաճելի
անակնկալ... Այժմ յես հավատացած եմ, վոր իմ թանկագին
հյուրը ուրախ ժամանակ է անցկացրել... (Նայում է ժամացույցին)
Յոթ և կեսն է: Գնդապետը, հավանական է, իսկույն այստեղ
կլինի:

ՌԱՆՑ. Գնդապետը... Նա գործ ունի ձեզ հետ:
ԿՈՒԱՆ. ՍԻՆԳ. Յեվ այո, և վոչ: Համենայն դեպս վոչ պաշտո-
նական այցելություն: Թեև ինձ նախազգուշացրել են վաղորդ...
ՌԱՆՑ. Այդ դեպքում մենք չենք խանդարի: Զճմարիտ չե՞,
Չոյա:

ՉՈՅԱ. Հարկ չկա շտապելու: Յես Պանդի ավազակախմբի ան-
դամ չեմ, վորպեսզի գնդապետ Ռավենշտեյնի խթաններինց վա-
խուստի դիմեմ: Բացի այդ, պարոն գնդապետն այնքան սիրալիր
կլինի, վոր չի քաշվի մեզ ուղղակի հայտնել, յեթև մենք ավելորդ
լինենք:

ՌԱ.ՇԵՆ. Չեմ կարծում, վոր նա այդ անի, տիրուհի: Այստեղ
ուղիղենցիայի գրասենյակը չե, և մենք այժմ վոչ վոքի չենք տան-
ջում: Զճմարիտ է, պարոն Ռանց:

ՉՈՅԱ. Իուք կարծում եք...Ո՞ր, այդ դեպքում... (Շարժում է
անում սեղից վեր կենալու):

ՍՊԱՍԱՎՈՐ. (Դուռը բացելով) Գնդապետ Ռավենշտեյն:

ՉՈՅԱ. (Ինքն իրեն, կամացուկ) Յերբ հարկավոր է, սպասա-
վորներն իրենց տեղն են...:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. (Արագ մտնում է) Պարոն խորհրդական... ներդ-
ուրթյուն եմ խնդրում: Յես չեյի յենթազրում, վոր ձեզ մոտ այս
չափ մեծ հասարակություն կգտնեմ:

ՉՈՅԱ. Մինք իսկույն գնում ենք, գնդապետ:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Ինչո՞ւ: Ինձ համար անախորժ կլինեք...

ՉՈՅԱ. Մեզ համար էս...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. (Ճառակուսած) Ի՞նչ ճես... պարզ չեմ հասկա-
նում... Իուք, հավանորին, շարունակում եք վերավորված լինել
ինձանից այն դեպի համար: Ինչ պրած, տիրուհի: Մենք ծերու-
նիներս — գինի ունենք, հեռավոր անցիալի մարդիկ, սակայն
միշտ կարողանում ենք պաշտոնական պարտականությունը կա-

զակցել քաղաքականության կանոնների հետ Բայց ընդհանրապես
ասած, յես չեմ կծում: Շատ կցավելի, յեթև սիրալիր տանտիրու-
հին ինձ վրա նայեք ինչպես մի հրեշի...

ՌԱ.ՇԵՆ. Չեմ ել մտածում, պարոն գնդապետ, վոր այսպիսի
համակրելի, քաղաքավարի վորդու հայրը կարող է հրեշ լինել...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ (Բարեհամբույր) Տիրուհի, խնդրում եմ ձեզ, շատ
ել յերես մի տաք այս դատարկապորտին: Դժբախտաբար, նա մեծ
սիրահար է կանացի հաճոյախոսություններին... Այստեղ նա պիտի
շատ և լուրջ զբաղվի: Կլոր, հավատացած յեղիր, վոր քո ժամա-
նակը Սոնտայում քացառապես սալոններում չի անցնելու...

ԿԼՈՐ. Յես այդպես չեմ մտածում, հայր...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Հույս ունեմ, դու ուղիղակի լավ դպրոց
կանցնես այստեղ: Մեր մղած պատերազմն Ասիայում անագործյն
է, անխնա և յերկարատև է լինելու: Սակայն նա շատ ավելի յե
կոփում: (Ու.Շեմին) Տիրուհի, յես չեմ ասում, վոր այս յերիտա-
սարդից քաջարի զինվոր դուրս չի գա: Վորոշ տվյալներ նա ունի:
Կազմանսի ել-Արարում նա կարողացավ չխոնարհվել արարական
գնդակներին առաջ: Իմացականություն նույնպես ունի:

ԿԼՈՐ. Հայրիկ...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Ինչ վոր ճիշտ է, ճիշտ է: Սակայն ամեն մի
արմատ կարիք ունի հղկվելու, բարեկամս: Ուստի, ասում եմ, —
մեկ ամիս Պանդին հետապնդելն ավելի կտա քեզ, քան ամբողջ
մի սեմեստր ուղիղակի դպրոցում:

ՉՈՅԱ (Վեր է կենում, ձանձրացած տոնով) Թանկագին տան-
տիրուհի, թույլ տվեք հրաժեշտ տալ ձեզ: Հույս ունենք մոտ ժա-
մանակ տեսնել ձեզ մեզ մոտ: Լեյտենանտ, դուք մնում եք,
իհարկե...

ԿԼՈՐ. Ինչո՞ւ... Իհարկե գալիս եմ: Յերբ դուք գնում եք, յես
ել ձեզ հետ:

Հրաժեշտ եմ տալիս միմյանց:

ՌԱ.ՇԵՆ. Յես կուղեկցեմ ձեզ: Պուրակում այժմ այնպես լավ
է: Պարոն գնդապետ, ներեցեք...

Կանայք, Կլոր յեվ Ռանցը դուրս են գնում աչ:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. (Նայելով ժամացույցին) Վստահ եմ, ձեր հյուրը
սպասեցնել չի տա... Յես այնքան ել ազատ ժամանակ չունեմ:
ԿՈՒԱՆ. ՍԻՆԳ. Հավատացած յեղեք, նա չի ուշանա:
ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Առավել լավ:

Դադար:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Պարոն զնդապետ, յեթե յես համաձայնվեցի իս վաղեմի ընկերոջ խնդրին՝ ձեզ ներկայացնել իրեն, յես այդ արեցի զոչ սիայն վաստակավոր և Ֆրանսիայի հավատարիմ ծառային հարգելու ցանկությամբ: Ինձ թվում է, վոր այդ իմաստունի անուն կրող մարդու հետ զրուցելը գուցե ձեզ նույնպես վորոշ ոգուտ կբերի:

ՌԱՎԵՆՇՏԵՑՆ. Դուք ձիշտ եք վարվել: Մի մարդ, վոր յերկասարդ ժամանակ բախտ ե ունեցել ազմիրալ Կուրբոյի հետ զրուցել, վորն ակամատես է յեղել մեր առաջին քայլերին Տոնկինում և, իհարկե, բոլորից լավ է ճանաչում յերկիրն ու մարդկանց, այդպիսի մարդը վոչ միայն հետաքրքիր զրուցակից է, այլև մի փոքր ավելի:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Յես պիտի ձեզանից ներողություն խնդրեմ: Ինչպես բոլոր ծերունիները, մանդարին Իգուեն-Անը սրբորեն հարգում է հյուրասիրության արդիցիաները: Մանավանդ, նա այնքան ծեր է և թույլ, վոր գահավորակում մի փոքր յերկար նստելն անգամ կհոգնեցնի նրան: Դուք պիտի համակերպվեք, վրդպեազի ձեր ծանոթությունը տեղի ունենա գուտ տեղական պալատներում: (Ձազանաբում է) Դուք ոպիում ծխում եք:

ՌԱՎԵՆՇՏԵՑՆ. Քիչ: Խուսափում եմ՝ ճշմարիտն ասած:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Դուք զիտեք, վոր ոպիումը թեև Յեվրոպայում մահացու թույն է համարվում, սակայն այստեղ համարյա կենսական անհրաժեշտություն է: Ինքնին, նրա գործածությունը չպետք է չափազանցության հասնի: Յես չեմ պնդի, վորպեսզի մի քանի ծխամորձ ծխեք, բայց մեկը պետք է ծխեք, ծերունիին չվերաժողելու համար:

Ձանգի ձայնի վրա ներս մտած յերկու սպասավոր յետ եմ փաշում այնչով ձայն կողմերում յեղած անկատելի փեղկերը բեմի յետնվի մասում: Բացվում է ընդարձակ, կլոր մի սեմյակ, լուսավորված առատադից կախված մեծ լապտերի գունատ-մառուշակազույն լույսով: Լապտերի տակ գտնվում է լայն յեղ ճածրիկ մահին, կարմիր փայտից, խոտի բարձրով: Մահնի մեջտեղ — սկուտեղ, վառվող լամպով՝ ոպիումի համար:

ՌԱՎԵՆՇՏԵՑՆ. Սա ձեր ծխարանն է՞. Որիդինալ է...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Յես հարկադրված եմ միշտ պատրաստ պահել այն, վորովհետև տեղացի պաշտոնյաները հաճախ են այցելության գալիս ինձ: Սակայն չեյի ցանկանա, վորպեսզի բաց ծխարանը խանգարեր իմ յեվրոպական տան տեսքը: Ձեր վորդին, որինակ, քիչ առաջ նստած այստեղ, այս ծխարանից յերկու

քայլ հեռավորության վրայ, անշուշտ նրա զոյության մասին զազափար անպամ չուներ:

ՍՊԱՍԱՎՈՐ. (Ձեկուցում է) Մանդարին Իգուեն-Ան:

Յերկու ուրիշ սպասավոր ներս եմ բերում մի շատ ծերունի մանդարինի, վորը հագած է բայի գույնի մետաբոյա վռակեքել վիշապներով անդնագործած հագուստ: Ռա վ ե ն շ տ ե յ ն զ վ եր է կեճում տեղից: Մանդարինը վողջուճում է, ձեռքերը կրծքին խաչած:

ԿՈՒԱՆԳ ՍԻՆԳ. (Ներկայացնելով) Պարոն Իգուեն-Ան, ուսյալ մանդարին առաջին դասի, պաշտոնաթող, Ֆինանսների նախկին խորհրդական Պյուկսյուֆենում: Գնդապետ Ռավենշտեյն, արտակարգ լիազոր պարլամենտական հանձնաժողովի:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ, (Մեքուճակաճ խուլ ձայնով) Ներեցեք ինձ, պարոն գնդապետ, յեթե այս տանը, այս Ֆրանսիական տանը յես ձեզ չեմ վողջուճում տեղական ծեսով գետին տարածվելով, վորը չափազանց ծանր է իմ տարիքի և առողջության համար:

ՌԱՎԵՆՇՏԵՑՆ. Վոչ միայն տարիքը, այլ ձեր բարձր աստիճանն ազատում են ձեզ այդ բանից:

ԿՈՒԱՆԳ ՍԻՆԳ. Բարեհաճեցեք պառկել:

Բոլորն անցնում են ծխարան:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Լապտերից ձախ կողմը պատվավոր տեղն է, այդ տեղը սովորաբար հատկացվում է հյուրին: Պարոն գնդապետ, այս տան մեջ դուք հյուր չեք, այլ տանտեր: Ուստի թույլ տվեք խնդրել ձեզ...

ՌԱՎԵՆՇՏԵՑՆ. Խնդրեմ, խնդրեմ... Այդ նորություններն ինձ համար քիչ արժեք ունեն: (Պառկում է) Սակայն դուք, պարոն խորհրդական...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Յես այժմ չեմ ծխի (Ձայնը քիչ բարձրացնելով, հանդիսավոր) Գրքում ասված է՝ «Յերբ յերկու անձանոթ կամենում են միմիանց լավ ճանաչել յերբորդը պիտի հեռանա»։ Յեթե պարոն գնդապետը վոչինչ դեմ չուներ...

ՌԱՎԵՆՇՏԵՑՆ. Խնդրեմ, ինձ հաշվի մի առեք: Յես ետիկայի բոլոր մանրամասնությունները կարող եմ չիմանալ, սակայն վոչ մի դեպքում չեյի ցանկանա խախտած լինել այն:

Սպասավորները ծխարանի խորքում գրազված են ծխարան պատրաստելով:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Գրված է նմանապես՝ «Անգիտությամբ վոճիր գործողը վոճիր չի գործում յերբեք»: Մեր մարդիկ սիրում են իրենց

հայրերի սովորութիւնները, սակայն պետք չէ ձեռնը բարոյապաշտան որենքի աստիճանին հասցնել:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Բարեհաճեցեք ծխել:

Դուք ե գալիս ծխարանից յեվ ետեզցնում ե հյուրասեղանի լույսերը: Բեմը լուսավորված ե միայն լապտերի մամուռապաշտան լույսով: Ի գ ու ե Գ-Ա Ե Զ յեվ գեղապետը ծխում ե:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Մանդարին Իգուեն-Ան, ձեր իմաստութեան հոչակը տարածվել ե հեռուները: Այս յերկրում յես յեկվոր մարդ եմ, բայց շատ եմ լսել ձեր մասին և ուրախ եմ, վոր տեսնում եմ ձեզ:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Յես նույնպես լսել եմ ձեր մասին. Լսել եմ գլուղեր ավերող, մարդիկ կոտորող արյունարբու գաղանի մասին: Յես կամենում եյի նրան իմ սեփական աչքերով տեսնել: Յեվ ահա տեսնում եմ ձերացած, զգուշալոր, ոտար յերկրի հյուրասիրութեան որենքները հարգող, ներողամիտ և քաղաքավարի մի մարդ...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Իգուեն-Ան, ինձ հայտնի յե, վոր դուք Ֆրանսիայի բարեկամն եք, թեև չեք ձգտում Ֆրանսիացի ձեռնալ, ինչպես այն անում են վոմանք: Դուք իհարկե, զիտեք, ինչ նպատակ ունի իմ այտեղ գալը...

ԻԳՈՒԵՆ. ԱՆ. Յես գիտեմ այդ:

Դադար:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Յեվ ինչ կասեք...

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Ձեզ առաջողներն, անշուշտ, յերկար խորհել են նախ քան ձեզ վրա կանգ առնելը: Ձեզ մնում ե ձեր պարտքը կատարել:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Ուզում եք ասել, վոր իմ գործողութիւնների պատասխանատուութիւնը նրանց վրա յե ընկնում... Այդ այնքան ել ճիշտ չէ: Ինձանից եր կախված ընդունել կամ մերժել առաջարկը: Յես համարյա անսահմանափակ լիազորութիւններ ունեմ: Յես կարող եմ շատ քիչ հաշվի առնել պարլամենտական հանձնաժողովին, սակայն պարլամենտական հանձնաժողովն իմ աչքում ներկայանում ե Ֆրանսիան, վորն իմ վրա դրել ե մի պարտականութիւն, վորն ամենեին չի հակասում յերկրի բարորութեան մասին իմ ունեցած հասկացողութիւններին: Յես հավատացած եմ, վոր Ֆրանսիային հարկավոր ե Հնդկաչինը և Ֆրանսիան կունենա Հնդկաչինը, բերելով այնտեղ խաղաղութիւն, հանգիստ և կարգ: Վոչ, յես մեխանիկական կատարելը չեմ

ուրիշ գաղափարների, այլ ինքս հանդիսանում եմ, իմ հասկացողութիւններով, այդ իսկ գաղափարի ներկայացուցիչը:

ԻԳՈՒԵՆ. ԱՆ. Դրանից յերևում ե, վոր ձեզ ուղարկողներն իմաստուն վորոշում են կայացրել:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Պարոն Իգուեն-Ան, թեև անքաղաքավարի պիտի յերևամ, սակայն ձեզանից սիրաշոյուններ չեմ սպասում, այլ ուրիշ բան: Յես ուզում եմ ձեզանից ստանալ խորհուրդ, ոժանդակութիւն, գուցե և ոգնութիւն: Ինչո՞ւ թագցնեմ... Յես զգում եմ, վորչափ դժվարին ե իմ գործը: Յես արդեն յերեք շաբաթ ե այստեղ եմ, և այդ ամբողջ ժամանակ վոչ մի քայլ առաջ չեմ անցել: Մինչև այժմ իմ ձեռք առած միջոցները վոչ մի արդյունք չեն տվել: Այդ ավագակն իրօք, անընկճելի յե...

ԻԳՈՒԵՆ. ԱՆ. Դեպի նպատակն անշեղ ընթացողը կհասնի նրան, յեթե՝ ընտրել ե ուղիղ ճանապարհ:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Խորամանկութեամբ նրան վորսալու իմ վորո՞ձերն անհաջող անցան: Յես խնայել եմ իմ զինվորների և վոչ թե նրա պիրատների արյունը: Ըստ յերևույթին, մնում ե մի բան՝ կանգ չառնելով գոհերի առաջ, հարձակման դիմել և բաց կովում ջախջախել նրան:

ԻԳՈՒԵՆ ԱՆ. Դա անկեղծ և քաջ մարդու վորոշում ե:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Յես ուզում եմ անկեղծ լինել մինչև վերջը: Ձեր ձայնը և ձեր անդորրութիւնը տրամադրում ե դեպի ձեզ... Կամ, թերես ոպիտմի հատկութիւնն ե այդպես...

ԻԳՈՒԵՆ. ԱՆ. Այն, ինչ ասված ե ծխարանի պատերի մեջ, այնտեղից գուրս չի գալիս: Ոպիտմի ազդեցութեամբ հայտնված գաղտնիքը — սրբազան ե: Յեվ ձեզ լսողը չափազանց ծեր ե՝ անհամեստ լինելու համար: Դուք ինձ, չնչին մարդուս արժանի արեցիք ձեր անկեղծութեանը, վորին, իրօք, յես արժանի չեմ: Թույլ կամք ինձ ևս արտահայտել իմ յերախտագիտութիւնը նույնպիսի սրտից բղիտղ ճշմարիտ խոսքերով...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Յես խնդրում եմ ձեզ այդ մասին:

ԻԳՈՒԵՆ. ԱՆ. (Դադարից հետո) Մի քանի ըոպե առաջ յես ասացի, վոր դեպի նպատակն անշեղ ընթացողը կհասնի նրան, յեթե ուղիղ ճանապարհ ե ընտրել: Ուղիղ ճանապարհ ընտրելն իմաստուն գործ ե: Բոլորի նպատակը մեկ ե՝ բարորութիւն: Միայն այդ բարորութեան արտահայտութեան ձևերն են տարբեր: Հավատացած եք արդյոք դուք, վոր այն ճանապարհները, վորոնք պիտի վորոնք դուք, տանում են դեպի բարորութիւն...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Իմ նպատակն է վոչնչացնել ավագակ Պանգին: Իմ յերկրի համար դա բարորությունն է:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Դուք արտասանեցիք մի անուն, վորը գուրկ է վորեւ նշանակությունից, ինչպես և բոլոր անունները: Յենթադրենք, դուք վոչնչացրիք այդ անվան տիրոջը... Ի՞նչ շահ գրանից: Ազմիրալ Կուրբոն, գրավելով Սոնտայը և արյունով վորողելով յերկիրը, վոչնչացրեց Լյուս-Վեն-Պյուկին՝ սև դրոշակների առաջ նորդին: Սակայն միթե պայքարը վերջացա՞: Կարծում եք դուք վոր Պանգի մահից հետո չի գտնվի մեկը, վորը նրա գործը շարունակի...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Յես այդ չգիտեմ:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Դուք այդ մասին չե՞ք մտածել: Հարց տվեք ձեզ անկնդրեք և կլսեք, վորոշակի կլսեք՝ «Ամեն ինչ կմնա նախկին ձևով»: Իմաստ ունի՞ արդյոք այնքան ուժ վատնել մեկ անուն վոչնչացնելու համար, վորպեսզի հետո մեկ ուրիշը հնչե...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Միթե դուք չեք ընդունում, վոր յեթե Պանգը չլինի, Տոնկինում խաղաղություն կտիրի:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Ներեցեք ինձ, սակայն յես կարծում եմ վոչ:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Առավել վատ:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Դուք հիմա ասացիք, վոր Պանգի մահը բարորություն կլինի Ֆրանսիայի համար: Սակայն մտածել եք դուք նաև այն մասին, արդյո՞ք դա բարորություն կլինի մեր յերկրի համար: Մտածել եք արդյոք, վոր Պանգը պայքարելով ձեր դեմ, իր յերկրի և իր ժողովրդի հանդեպ իր պարտքն է կատարում և նույնպես իր յերկրի բարորության մասին է մտածում: Յերբ պերմանացիները յեկան և տիրեցին Ֆրանսիական յերկիրը, ձեզանից յուրաքանչյուրը մի մի Պանգ չե՞ր արդյոք: Ձեզանից յուրաքանչյուրը բերանից չե՞ր լսվում արդյոք հայրենիքի ազատագրությունը րառերը, վորի համար դուք այժմ հալածում եք Պանգին, ինչպես գազանի, վորովհետև նա այդ իսկ քառերն է գրել իր դրոշակի վրա: Դուք հերոսաբար թոթափեցիք ոտարի լուծը ձեր հայրենիքի վզից և այդ հայրենիքը պարզեատրեց ձեզ քաջության շքանշաններով: Մինչդեռ Պանգի նույն այդ հերոսության համար դուք նրան հայտարարել եք քրեանքից դուրս և նրա համար խայտառակ մահ եք պատրաստում: Արդարացի՞ յե դա արդյոք ձեր հայրենիքի բարորության հակացողության չափանիշով:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Մենք միմյանց չենք հասկանա: Դուք դատում եք վորպես իմաստուն և չեք կարող թափանցիլ Ասիայի

նկատմամբ Յելրոպայի ունեցած քաղաքականության խորքը: Իսկ յես մտածում եմ և զգում ինչպես Ֆրանսիական գինչը:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Դուք զինվոր ելիք նույնպես, յերբ պաշտպանում ելիք ձեր յերկիրը: Բայց այն ժամանակ իմաստության ձայնը ձեզ համար հասկանալի յեր, վորովհետև ձեր դեմ չե՞ր ուղղված:

Լուրջա՞ն:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Իմ աչքում Պանգը լուի ավագակ է միայն...

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Մի դատապարտեք նրան, յեթե նա յել իր հերթին, նույն անունով է կոչում ձեզ:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Նա խոտվարար է... Այն յերկիրը, վորի ազատության համար՝ ըստ ձեր ասել է, պայքարում է նա, ահա արդեն կես դար է, վոր Ֆրանսիային է պատկանում:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Ելլա՞սը համարյա կես դար առաջ գերմանական յերկիր է դառել:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Ելլա՞սը... Իմ հայրենիքն է:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Տոնկինը Պանգի հայրենիքն է:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. (Լուում է)

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Ո՞վ է նա, յես չգիտեմ: Գուցե նա յերկրագործ է կամ արհեստավոր, գուցե խեղճ ձկնորս է, ինչպես մի ժամանակ Լիպուզը՝ Տոնկինը թաթարական գերիշխանությունից փրկողը: Սակայն ամեն մի հետք, վոր թողնում է նրա վտուքը, ապավորվում է յերեք հազարամյակ նրա նախահայրերի աճյունին միախառնված հողի վրա: Ուստի այդ յերկիրը, նրա քարերն ու ձուրիքը, նրա ձառնուտները, նրա յեղեգնուտները և կուսական անտառները պաշտպանում են նրան, ինչպես իրենց հարազատ գավակին, անընկճելի յեն դարձնում նրան գերադանց ուղմական ուժի դեմ: (Դալար) Գուցե իմ խոսքերը տհաճ են ձեզ համար... Յես ասում եմ այն, ինչ մտածում եմ...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Դուք խոսեցիք վորպես մի ձերուհի, վորը չի վախենում ճշմարտությունն ասելուց — իր ճշմարտությունը:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Ճշմարտությունը մեկ է միայն:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Ի՞նչ պետք է անեմ յես:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Խորասուզվեցե՞ք ձեր ներսն ու հարցրե՞ք ձեր խղճի ձայնին: Նա ձեզ պատասխան կտա: — Նա և վոչ թե յես: (Լուում է):

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Յես իրավունք չունեմ ունկնդրելու խղճի ձայնին: Յեթե յես լսեմ նրան, ապա դավաճանած կլինեմ իմ սկզբունքներին և իմ հայրենիքին:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Մի յեղեք դավաճան, յեթե կարծում եք, վոր
համարտությունը ձեր հայրենիքի կողմն ե:

Լուսբյուն:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Յես չեմ կարողանում ձեզ պատասխանել:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Ինձ հարկավոր չե ձեր պատասխանը: Ձեզ ե հար-
կավոր այն:

Լուսբյուն:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Յես չեմ կարողանում հավաքել իմ մտքերը:
Նրանք կուտակվում են մառախուղի նման... Նրանք յերկուանում
են... խուսափում են...

Լուսբյուն: Այ կողմից շտապ մտնում ե յեյտեմանտ ե կ մյ ա լ լ ը:
Կ ու ա ն գ-Ս ի ն գ ք, վոր նստած ե բազմոցում, բարձրանում ե
նրան ընդառաջ:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Սրա՛ս... Ի՞նչ ե պատահել...

ԵԿՄՅՈՒԼ. Գնդապետն այստեղ ե... Գնդապետը...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Կամաց խոսեցեք:

ԵԿՄՅՈՒԼ. Ինձ անհրաժեշտ ե...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. (Մխարանում բուլլ ձայն) Այդ դժուր եք, եկ-
մյուր... Ի՞նչ կա...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Միևնույն ե, նա լայժմ վեր չի կենա... Նա
հինգ ծխամորձ ուղիում ե ծխել... Յես կհաղորդեմ նրան... հետո...

ԵԿՄՅՈՒԼ. Յես պարտավոր եմ հաղորդել նրան անմիջապես:
Հարձակում — համարյա քաղաքագուհի մոտ... Պիրատները հար-
ձակվեցին գանձարանի գումակի վրա... Պահապանների կեսը
սպանված ե.

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Ի՞նչ... (Վեր ե ցտակում մահնից, յերեւում ե)
Գրողը տանի, յես չեմ կարողանում վտոքերիս վրա կանգնել...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Զարմանալի յե... այնուամենայնիվ վեր կենալ
այդպես, միանգամից... Բացառիկ ուժ ե... Համարյա գերմարդկա-
յին...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. (Դուրս ե վազում ծխարանից) Ասացեք... Ի՞նչ
ե պատահել — Հարձակում: Ասացեք վերջապես...

ԵԿՄՅՈՒԼ. Դարանը քաղաքի դարպասի մոտ եր, ձորի մեջ:
Հարձակվողների խելակորույս խիզախությանը նայած, ավազակա-
խումբը առաջնորդում եր ինքը Պանզը... Միլիցիոներները փա-
խուստի դիմեցին: Դիմազրություն փորձեց ցույց տալ միայն զին-
վորների դասակը: Համարյա բոլորն ընկան... Պիրատները թագնը-
վեցին...

ԳՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Դա չլաված բան ե... Ի՞նչ հանդիմություն...

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Թույնի ազդեցությունն անցնում ե... Վ՛նչ, ձեր
իմաստությունն, ինչպես ե ձեր ուղիումը ինձ համար չեն... Հրա-
ժարվել պայքարել այդ բանդիտի, մե՞ծ ճանապարհի այդ ավա-
զակի դեմ, վորին ներկայացնում են վորպես յերկրի ազատա-
բարի... Ընդունել, վոր յես հաղթվել եմ, հեռանալ ե մաքրել աս-
պարեզը նրա վտճարագործությունների համար... Համաձայնվել,
վորպեսզի Ֆրանսիան կորցնի Տոնկինը, հրաժարվի նրա անբավ
հարստությունից... Վ՛նչ... Յերդվում եմ, վոր յես յերես առ յերես
կհանդիպեմ այդ Պանզին... Յե՛վ այդ բոպեն յերկուսիցս մեկի հա-
մար կլինի վերջինը... (Դեպի մահին, ուր պառկած ե Իգուեն-Անը)
Կամ եք...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. (Մխարանից, կամացուկ) Նա քնած ե...

ՎԱՐԱԳՅԻՅՐ

ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Պարակ, սեղիզենա Ռանցի բնակարանում: Տաղավար: Մի կողմ բարձրանում
ե դարբանդը: Ծորում վառադուր, վորի յետե ետորդան ե, ուր տեղի յե
ուհենալու ներկայացումը: Այդու կողմ նայող լուսամուկները վառ լուսավոր-
ված են:

Պարահանդես ե ի պատիվ գեղապետ Ռավենշտեյնի:

ՆԱՆՏԵՅՆ. Ի՞նչ սքանչելի յերեկո յե... կարծես հաղար ու մեկ
դիչերներից լինի... Ամեն ինչ պայծառ ե: Շատ զեղեցիկ ե...

ՎԻԼՅԵՐ. Ո՛ր, ինչ եք ասում... Դավառական համեստ յերե-
կույթ, վոչ ավել... Փարիզի յերեկույթներից ե պարահանդեսնե-
րից հետո ձեզ համար...

ՆԱՆՏԵՅՆ. Հավատացնում եմ ձեզ, Փարիզում յերբեք այսպիսի
բան չի կարելի տեսնել... Իսկ այս բեմն ինչի՞ համար ե:

ՎԻԼՅԵՐ. Ներկայացում ե լինելու:

ՆԱՆՏԵՅՆ. Այսո՞ր... Ա՛խ, հա, հիշում եմ... Զոյան ինձ ասել
ե... Շատ հետաքրքիր ե...

ՎԻԼՅԵՐ. Զինական ֆոկուսիկներ... Դա, իսկապես, ձեզ հա-
մար նորություն կլինի: Նրանք իսկական հրաշքներ են ցույց
սալիս...

ՆԱՆՏԵՅՆ. Նրանք կրակ են կուլ տալիս, այո՛:

ՎԻԼՅԵՐ. Իմիջի այրոց և այդ: (Պաճոսով) Սակայն այն կրակը, վոր ցայտում է ձեր աչքերից, նրանք կուլ տալ չեն կարող...

ՆԱՆՏԵՅԻ. Ո՛ր... Ա՛յ քեզ կոմպլիմենտ... Թանկագիրն Վիլյեր, դուք բանաստեղծական և գունազեղ մի բան եյիք մտածել, սակայն ստացվեց...

ՎԻԼՅԵՐ. Ի՞նչ կա վոր... Կոմպլիմենտ չինական ճաշակի...

ՆԱՆՏԵՅԻ. Յես աստվածացնում եմ այն ամենը, ինչ չինական է... Չինական կոմպլիմենտ, չինական հագուստ, չինական փախտներ և վողջույն...

ՎԻԼՅԵՐ. Չինական փլիրտ...

ՆԱՆՏԵՅԻ. Ո՛ր... դա ակնարկի յե նման: Վստահ եմ, իմ հասցեյին չե...

ՎԻԼՅԵՐ. Դե իհարկե, վոչ...

ՆԱՆՏԵՅԻ. Իմ հակումը դեպի եկզոտիկան չի տարածվում մինչև այդ սահմանները...

ԵԿՄՅՈՒԼ. Դա բարբաղդութուն է մեզ համար, տիրուհի...

ՆԱՆՏԵՅԻ. (Հովհարով խփելով ցրան) Շատ ինքնավստահ մի յեղեք, պարոն լեյտենանտ... Բայց և այնպես, բարեկամներս, ձեզ մոտ շատ խուլ անկյուն է... (Վիլյերին) Այդ մասին արդեն խոսում են, այ՞...

ՎԻԼՅԵՐ. Ինչի՞ մասին...

ՆԱՆՏԵՅԻ. Չինական ֆլիրտ...

ՎԻԼՅԵՐ. Սկսում են խոսել, համենայն դեպս: Միշտ այդպես է լինում. սկզբում թե մեկը և թե մյուսն զգուշ են լինում, ապա կամաց կամաց զգուշութունը մոռանում են և սկսում են ավելի համարձակ դառնալ...

ՆԱՆՏԵՅԻ. Յեզ վերջի վերջո վաղուց իր թարմութունը կորցրած նորութունը հասնում է ամուսնուն...

ԵԿՄՅՈՒԼ. Այդ ամուսինը կարծում եմ, վաղուց արդեն ավելին գիտե, քան վորեք մեկը:

ՎԻԼՅԵՐ. Շատ հաճանական է...

ՆԱՆՏԵՅԻ. Միթե նա չի խանգում...

ԵԿՄՅՈՒԼ. Այդ մասին պետք է իրե՞ս հարցնել:

ՆԱՆՏԵՅԻ. Ափսոս... Հեռաքրքիր կլինեք տեսնել, ինչպես է արտահայտվում չինական խանդը... Ինձ թվում է, շատ ծիծաղելի պիտի լինի...

ՎԻԼՅԵՐ. Ծիծաղելի... Վոչ, տիրուհի, դուք սխալվում եք: Նա սարսափելի յե...

ՆԱՆՏԵՅԻ. Իսկապես:

ՎԻԼՅԵՐ. Տվյալ դեպքում չինական խանդի մասին խոսք լինելի կարող: Պարոն խորհրդականը ինը տասերորդով ֆրանսիացի յե, և... գուցե պատիվ է համարում իրեն. ո՞վ գիտե...

ԵԿՄՅՈՒԼ. (Ծիծաղում է) «Ճիշտ այնպես, ինչպես Փարիզում...»: Այո, սա նրա սիրած խոսքն է...

ՎԻԼՅԵՐ. Բայց յեթե խնդիրը վերաբերվեր մի վորեք տեղացի ամուսնու, այդ դեպքում խորհուրդ կտայի վոմանց զգուշ լինելին... Ասիական խանդը սոսկալի յե: Նա կարող է տարինեք տեկել, և վերջի վերջո, այնուամենայնիվ վրիժառու կլինի: Նրա վրեժը խորհրդավոր է և անխնա: Մի գեղեցիկ որ մարդն անհայտանում է, կարծես գետնի տակն է անցնում: Սակայն հավատացած յեղեք, գրողը տանի, վոր նա զրոսանքի չի դնացել...

ՆԱՆՏԵՅԻ. Սոսկալի յե...

ԵԿՄՅՈՒԼ. Այդպիսի դեպք պատահեց յերկու տարի առաջ Պյուկայունում: Ոտարեկերյա լեզիոնի մի սպա մտերմացավ տեղացի Լան Գոկի կնոջ հետ... Յեզ, յերևակայեցեք, վազրի գո՞ղարձավ:

ՆԱՆՏԵՅԻ. Միթե դա իսկապես չեր կարող պատահել:

ԵԿՄՅՈՒԼ. Կարող եր, իհարկե, յեթե Պյուկայունում վազրեր ավելի հաճախ հանդիպելին, քան Փարիզում: Պատահաբար հարյուր տարին մեկ մի վազր լույս ընկավ և պատահաբար հարձակվեց հենց նրա վրա, ում հարկավոր եր...

ՆԱՆՏԵՅԻ. Սարսափելի յե... Ի՞նչ յերջանկութուն է, վոր մեզ այդպիսի փորձանք չի սպառնում: Կատակը մի կողմ, յես սկզսեցի ավելի շոգել:

ԵԿՄՅՈՒԼ. Պողպատակ չեյիք ցանկանա:

ՆԱՆՏԵՅԻ. Ուրախությամբ, յեթե մեկն ու մեկն այստեղ բերի: Պարերից այնպես եմ հոգնել, վոր տեղից շարժվել չեմ ուզում:

ԵԿՄՅՈՒԼ. Վիլյեր... դուք այստեղ տանու մարդ եք...

ՎԻԼՅԵՐ. Վոչ, ինչո՞ւ յես...

ԵԿՄՅՈՒԼ. Դուք ավելի շուտ կհասնեք բուֆետին: Այնտեղ այնքան են խանգել...

ՎԻԼՅԵՐ. Բայց դուք զինվորական եք, այստեղ տոնակատարման հերոսը, Ընդհակառակը, դուք ավելի շուտ կհասնեք:

ՆԱՆՏԵՅԻ. Պարոնայք... յեթե դա այդչափ զժվար է, յես չեմ կամենում...

ՎիլՅեթ. } (Միասին) թռչում ենք...
ԵԿՄՅՈՒԼ. }

ՆԱՆՏԵՅԼ. Հա, հա, հա... Բայց այդ դեպքում յես մնում ես մենակ...

ԵԿՄՅՈՒԼ. Իսկապես... Ինչպես անել...

ՆԱՆՏԵՅԼ. Ուզում եք վիճակով... Ահա իմ թաշկինակը... յերկու հանգույց ե: Ով յերկար պոչով հանգույցը հանի, գնում է պուֆետ... ով մյուսը հանի, մնում է ինձ հետ ձանձրանալու... Համաձայն եք...

ՎիլՅեթ. Հրաշալի... Յես առաջինն եմ քաշում:

ԵԿՄՅՈՒԼ. Վոչ, յես...

ՆԱՆՏԵՅԼ. Միասին: Ահա: Ձեզ վիճակվեց պաղպղակ բերել...

ԵԿՄՅՈՒԼ. Յենթարկվում եմ ձակատագրիս: (Հեռանում է):

Դադար:

ՆԱՆՏԵՅԼ. Գոհ եք:

ՎիլՅեթ. Չափազանց... Յես յերջանիկ եմ... Յես...

Դադար:

ՆԱՆՏԵՅԼ. (Յերագիտ) Ի՜նչ գեղեցիկ է այստեղ...

ՎիլՅեթ. Զարմանալի գեղեցիկ...

Յերկարատեղ դադար:

ՆԱՆՏԵՅԼ. Ինձ շատ են դուր գալիս այս փոքրիկ լապտերները: Նրանք այնպես խավար են... Այս կիսախավարում շատ բան կարող է թույլ տալ մարդ իրեն...

ՎիլՅեթ. Այո... Այդ լապտերները շինված են հաստ յուղոտ թղթից: Այսպիսի լապտերը չի այրվում, նույնիսկ յեթե մոմը մեջն ընկնի...

ՆԱՆՏԵՅԼ. Իրոք... (Անվերջ դադար) Բնեցի՞ք, ինչ ե...

ՎիլՅեթ. Տիրուհի, յես...

Գալիս են Եկմյուրը՝ պաղպղակը մոռնի: Բ ո ս Կ Թ Ե Թ Ե Լ Ը,
Մ ա ժ Ե Բ Ը Ե յ Վ Պ Ե Ե Ե Լ Ը:

ԵԿՄՅՈՒԼ. Ահա է յես... Վստահ եմ, դուք չձանձրացաք... Հա՛նելի ժամանակ անցկացրիք, ճշմարիտ չե՞ք...

ՆԱՆՏԵՅԼ. (Ծաղրը չբացնելով) Սքանչելի... Ծնորակալ եմ, պարոն լիտենանտ, դուք շատ սիրալիք եք: Բայց ինչո՞ւ այսչափ ուշացաք... Յես կարծում եյի դուք յերբեք չեք վերադառնա...

ԵԿՄՅՈՒԼ. Ստիպված եյի իսկական կռիվ մղել: Այնտեղ, իսկապես, այնքան բազմութուն է խռնված...

ԲՈՍԿԱՐԵՆ. Ընդհանուր առմամբ յերեկոն հաջող ե: Ծճմարիտ չե՞ք, տիրուհի... Գրողը տանի, այս յերեկոյի մասին կլմանան

Փարիզի բուլվարներում... Յես այնպիսի ճաճուան հեռագիր կազմեմ... Ներկա էյին բոլոր մանդարինները, հարևան խոշոր և մանր սեզիդենաները, շրջանի վողջ սպայությունը... Կատակ չե... Ներկա յե լինում ինքը գեներալ-նահանգապետը...

ՆԱՆՏԵՅԼ. Գնդապետը պարզ և կատանա, այնպես չե՞:

ԲՈՍԿԱՐԵՆ. Անշուշտ... Իուք կարող եք նրան արդեն գենե-լալ անվանել... Յե՛վ, ազնիվ խոսք, այդ պարզեն անտեղի չի լինի: Այդպես արագ և այդպես վճռական վոչնչացնել Պանգին — դա իսկական հերոսութուն է...

ՄԱԺԵՐՈ. Այո... Այժմ վերջապես Սոնտայում իրապաղութուն կտրի:

ՖՐԵՆԵԼ. Այդ դեռ հարց է:

ԵԿՄՅՈՒԼ. Միրելիս, դուք պեսսիմիստ եք...

ՖՐԵՆԵԼ. Անվանեցեք, ինչպես կամենաք: Բայց յես կարծում եմ, հետո յի կարելի յեր ստնել...

ՎիլՅեթ. Ֆրենելը միշտ սպողիցիս յե — դա նրա մասնագի-տությունն է:

ԲՈՍԿԱՐԵՆ. Այո, սակայն չի կարելի չափազանց նեղ մաս-նագետ լինել: Թերահավատությունը յերբեմն մոտենում է պատրի-տիզմի հակասության: Վստահ եմ, վոր գնդապետի ներկայու-թյամբ դուք չեյիք համարձակվի նման հայացք արտահայտել... Ինչպե՞ս... այս հրավառված այգում, այս յեռագույն դրոշակների հովանու տակ կասկած հայտնել, վոր Պանդի մահով պիրատական շարժումը վերջացած չե գաղութում...

Գալիս է Զոյան Լի-Տոլստոյի աղնիցաբյամբ:

ԶՈՅԱ. (Ընկերուհուն) Իու այստեղ ես... Ահա ինչու բոլոր աղամարդիկ այստեղ են հավաքվել...

Լի-ՏՈՒՈՆԳ. Այսչափ հասարակություն, փայլուն հասարա-կութուն, կարող եմ ասել, յերբեք չի հավաքվել սեզիդենցիայի դա՛նլիճներում: Այս տոնակատարման հիշատակը յերկար ժամա-նակ չի ջնջվի ազգաբնակչության հիշողությունից...

ՄԱԺԵՐՈ. (Վիլյեթին) Պաշտոնական ճարտարախոսություն... Մինչդեռ նրա գեմքի արտահայտությունը բավական թթված է: Ձե՛մ կարծում, վոր մանդարիններից վորևէ մեկն անկեղծ ուրախ լինի այս հաղթանակի համար...

ՎիլՅեթ. Բացի վարչությա՛ս խորհրդականից, Նա ղեկավարա-լիս չի անում, արժանավայել չի բերք է բռնում, ուստի ավելի կա-րելի յե չկասկածել նրա անկեղծալյանը:

ՄԱԺԵՐՈՒ. Ասում են, մինչև անգամ ծերունի Իգուեն Անն ախտեղ ե:

ՎԻԼՅԵՐ. Այո, յես նրան տեսել եմ ծխարանում:

ՉՈՅԱ. (Ընկերուհուն) Ո՞ւմ հետ ես ֆլիրտ անում...

ՆԱՆՏԵՅԼ. Բոլոր ցանկացողներին: Դժբախտաբար այդպիսիներին թիվը շատ չե: Մեկ էլ, գրոշ չարժեն: Այդ Վիլյերը... Նա արտաքինով բոլորից հետաքրքիրն է, բայց այդպիսի ազուր յես իմ կյանքում դեռ չեմ տեսել: Յերևակայեցեք, նա...

ՉՈՅԱ. Հետո կպատմես, սիրելիս: Հարցը նրանուսն է, վոր յես մի առ ժամանակ մենակ պիտի մնամ այստեղ: Յես կուզեյի, վոր դու քո ամբողջ պոչը սենյակ քարչ տայիր...

ՆԱՆՏԵՅԼ. Կրկի՞ն քո խանդը:

ՉՈՅԱ. Թերևս:

ՆԱՆՏԵՅԼ. Դու չափազանց ակներև ես դարձնում այն: Դա աչքի յե ընկնում:

ՉՈՅԱ. Թող, ինձ համար միևնույն է:

ՆԱՆՏԵՅԼ. Իդուր: Հարկավոր ե զսպել... Նման դեպքերում գուապ ե սառնարյուն լինելը մեծ նշանակություն ունի: Լսիր, չեմ կարող արդյոք ոգտակար լինել քեզ:

ՉՈՅԱ. Չեմ կարծում... Թեև... Բայց... Հասկանում ես, յես մի բան եմ մտածել...

ՆԱՆՏԵՅԼ. Բըճճճ... Սարսափում եմ... Այնքան են պատմել ինձ չինական խանդի, չինական վրիժառություն մասին...

ՉՈՅԱ. Չինական վրիժառությունն ունի իր լավ կողմերը: Նա անզուլթ ե և խելացի, վորովհետև սովորաբար իրենից հետո հետք չի թողնում: Սակայն այդ մասին հետո: Իմ ծրագրին իրագործելուց ստաջ ինձ հարկավոր ե վերջնականապես համոզվել... Թեև իմ կասկածներն ավելի քան հիմնավոր են... Հասկանում ես... Բայց հարկավոր ե, վոր այդ կասկածները հաստատվեն... Յեվ այն ժամանակ... (Հեռանում են, շարունակելով խոսել):

ԵԿՄՅՈՒԻ. Այո, շատ տաք կռիվ եր: Պանզի շտաբը տեղավորված եր խրճիթում, անտառի յեզրին: Խղճուկ մի խրճիթ, սակայն րանք պաշտպանվում եյին զրահապատի նման: Չորս կողմը տրորված բրնձի արտեր եյին: Ստիպված յեղանք դուռը թի գնալ մինչև ծնկներս ջրի միջով: Տոնկինյան զինվորները ցույց տվեցին իրենց իսկական քաջությունը:

ԼԻՏՈՒՆԳ. Ասում են, կորուստը շատ մեծ չե...

ԵԿՄՅՈՒԻ. Մեծ է, բայց այնքան էլ չե... Գնդապետը հերո-

տաթյան հրաշքներ գործեց: Նա ամբողջ ժամանակ առաջից ե գնում: Նրա սողավարտը զնդակներից ծակծկվել եր: Պարզ ե, վոր այդպիսի որինակը վոզևորում ե մարդկանց...

ԲՈՍԿԱՐԵՆ. Այնուամենայնիվ ափսոս, վոր հնարավոր չեղավ Պանզին կենդանի բռնել: Եֆֆեկտ կուեննար...

ՄԱԺԵՐՈՒ. Գրողը նրա հետ... Դեռ ո՞վ գիտե, կարող եր փախչել... ԵԿՄՅՈՒԻ. Այո, այսպես ավելի ապահով ե:

ՅՐԵՆԵՆԼ. Դիակը գոնե ճանաչվեց:

ԵԿՄՅՈՒԻ. Ճանաչվեց, բայց դա դեռ քիչ է: Մեր բարեկամին դեռ շատերը կճանաչեն: Դնդապետի կարգադրությամբ Պանզի գլուխը կըրջագայի շրջանի բոլոր քաղաքների շուկաներում...

ՎԻԼՅԵՐ. Սատանան տանի, քսաներորդ դարում... Դրանից իսկական միջնադարի հոտ ե փչում...

ՆԱՆՏԵՅԼ. (Առաջանում են Չոյայի հետ) Իհարկե դա ավելի լավ է: Դու չպետք ե նրանց աչքին յերևաս, իսկ յես կարող եմ խաբել նրանց, յերբ կամենաս: Ա՛խ, ինտրիգան պաշտում եմ — և յես դեմ չեմ նրան մի փոքր խրատելուն: Ուա-Շենին էլ, վորպեսզի մեր կավալերներին մեր ձեռքից չխլի...

ՉՈՅԱ, Ափսոսում եմ, վոր քեզ առացի: Դու այդ ամենը կատակ ես ընդունում:

ՆԱՆՏԵՅԼ. Ամենևին:

ՉՈՅԱ. Հարկավոր ե զգուշություն...

ՆԱՆՏԵՅԼ. Սովորեցրու, սովորեցրու ուսյալին... Չգուշության մասին, չեք խանդարի, վոր ինքդ չմոտանայիր: Վերջապես, մեզանից ո՞վ ե դերասանուհին... Դ՛հ, թե յես...

ՉՈՅԱ. Լավ, կտեսնենք: (Հյուրերին) Պարոնայք, իսկույն կգա գեներալ-նահանգապետ Դետերբյեն: Հարկավոր ե գլխավորել նրան: Հրավիրում եմ բոլորիդ անցնել սենյակնհերը: Ցանկացողները հետո կարող են վերադառնալ այստեղ: Հինց վոր գեներալ-նահանգապետը դա, անմիջապես կսկսի ներկայացումը:

ՆԱՆՏԵՅԼ. Ի՞նչ հետաքրքիր ե...

ԲՈՍԿԱՐԵՆ. Դերասաններն արդեն հավաքվել են: Ֆոկուսնիկներ, պարուհիներ...

ՆԱՆՏԵՅԼ. Միթե բալետ էլ պիտի լինի:

ԲՈՒԿԱՐԵՆ. Կամրջիկի թագավորի պարուհիները. Հույս ունեմ, ներկայացումը հաջող կանցնի...

ՉՈՅԱ. Հիշեցեք, պարոն գլխավորապես, վոր դա ձեռ մտահոգություն առարկան ե:

ԲՈՍԿԱՐԵՆ. Այո, այո, ծերութեանս հասակում ուժիս չոր ել
դարձաւ... Գնամ կուլիսների յեւե, հուպ տամ, վորպեսզի ամեն
ինչ պատրաստ լինի: Վորպէս գաղտնիք, պարոնայք, ասեմ, վոր
մենք սկսում ենք ֆոկլունիկներից... Յե՛վ առաջին ֆոկլուն
աճենից հետաքրքիրն է լինելու... Ամենից, այսպէս ասած, ցըն-
ցողը... (Գնում է ետքադայի կողմը):

Ետեւում գրաստանների մեջ յերկում է ԿԼՈՂ ՌԱՎԵՆ-
ՂՈՒԵՅՔԸ: Արհեստակամ անտարբեր քայլերով մտնում
տաղավարին:

ՉՈՅԱ. Գնանք, պարոնայք, դնանք շուտով: Սա ի՞նչ բան է,
իսկապես: Նահանգապետութեան բոլոր պաշտոնյաները հավաքվել
են այգում... Դետերը յեն րոպե-առ րոպե կարող է գալ...

Զրուցողների խումբը դանդաղ հեռանում է դեպի դարավանդը
յե՛վ ծածկվում սենյակներում. նանտայը մնում է դարավան
դում: Ապա, շրջադարձ ցանապոսիով արագ անցնում է տաղ
վարի յետեւը:

ԿԼՈՂ. (Տաղավարում) Վերջապես... Գրողը տանի, կարծես զի-
տավորյալ լինի... Միակ առանձնացած անկյունն այս ապուշ այ-
գում այս տաղավարն է... (Զղայնաբեկ փայլում է յես ու առաջ:
Հանկարծ կանգ է առնում, ականց է դնում): Ո՞վ է, (Դուրս է գա-
լիս յե՛վ բնդիարվում է Նանտայի հետ):

ՆԱՆՏԵՅԻ. Ներեցե՛ք... յես, կարծեմ, տաղավարում մոռացե
եմ իմ հովհարը...

ԿԼՈՂ. Յես... կգամ... հեռո...

ՆԱՆՏԵՅԻ. Կարճը եմ բաժանել ձեզ հետ ձեր առանձնութեանը
պարոն լեյտենանտ...

ԿԼՈՂ. Ո՞, տիրուհի... Դա ի՞նչ ցանկութեանն է...

ՆԱՆՏԵՅԻ. Յես տիրում եմ... Միակ հետաքրքիր տղամարդն
այստեղ դուք եք: Մի փոքր զբաղվեցե՛ք ինձանով, ի՞նչ արժե դա
ձեզ համար... Միթե յես ձեզ բոլորովին դուր չեմ գալիս...

ԿԼՈՂ. Ներեցե՛ք... յես չգիտեմ ինչ պատասխանել այդպիսի...
այդ տեսակ...

ՆԱՆՏԵՅԻ. Ամենին չի յերևում, վոր դուք շողոքորթված եք:
Սակայն միևնույն է, դա եյական չե... Նստե՛ք զրուցե՛ք: Յես
կպատմեմ ձեզ հետաքրքրող...

ԿԼՈՂ. Շնորհակալ եմ, բայց... լավ է մեկ ուրիշ անգամ: Այստե
յես տարրինակ տրամադրութեան ունեմ: Ուզում եմ մենակ
լինել և ...

ՆԱՆՏԵՅԻ. (Համառ նայում է նրա աչքերին) Զգուշացե՛ք, Կլող...
Նա սարսափելի խանդոտ է...

ԿԼՈՂ. Չեմ հասկանում, տիրուհի...

ՆԱՆՏԵՅԻ. Քողեք: Շատ լավ ել հասկանում եք: Դուք այստեղ
տեսակցութեան եք նշանակել... Յես գիտեմ... Այո, այո, հոնքերը
բարձրացնելու կարիք չկա... Դա ասան թատրոնական պրիոմ
է: Գիտեմ նույնպէս, թե ում հետ: Սակայն մի վախեցե՛ք: Յես
շատ ավելի լավ ընկեր եմ ձեզ, քան դուք կարող եք յենթադրել
է յես տիրում եմ խեղճ Ռա-Շենին, այդ ձենապակուց շինած
փոքրիկ տիկնիկին... Բայց դուք սոսկալի անզգուշ եք, Կլող...
Մեթե չեք կարելի այլ տեղ ընտրել, քան այս հիմար տաղավարը...

ԿԼՈՂ. Ել Վճիռե՛ղ... Այստեղ այնպէս է, վոր խնձոր զցելու
տեղ չկա...

ՆԱՆՏԵՅԻ. Ըստ յերևույթին դուք մտածել եք՝ վորչափ աչքի
ընկնող տեղ լինի, այնքան կասկածից դուրս է: Դա լավ ձե ե
բայց վոչ միշտ... Ինչ արած, պետք է ձեզ ոգնել: Յես ձեր դաշ-
նակիցը կդառնամ: Կամենում եք... Դե, բարեհաճեցե՛ք լսել: Դուք,
իհարկե, պիտի վախենաք միայն նրանից: Մյուսները հաշվի չեն
ամուսինն ել նույն թվում: Յես կհետևեմ Զոյային և ազդանշան
կտամ ձեզ: Յես պաշտում եմ ինտրիգան: Բացի դրանից, յես ու-
զում եմ այդ խանդոտին մի փոքր խրատել: Դարավանդն այստեղից
յերևում է: Յեթե յես դարավանդում չեմ լինի, արեք, ինչ վոր
կամենում եք... Ինքնին հասկանալի յե, քաղաքավարութեան
սահմաններում: Յեթե յես յերևացի դարավանդում, նշանակում է,
թշնամին մոտ է: Այդ դեպքում անթարթ նայեցե՛ք ինձ: Յերբ
յես ցած կձգեմ ձեռնոց — մեկ, յերկու, յերեք... — զանազան կող-
մեր, մկների նման... Հասկացե՛ք:

ԿԼՈՂ. Շնորհակալ եմ: Ինչքան բարի յեք դուք: Յես չեյի
սպասում տեսնել ձեզանից այդչափ կարեկցութեան: Հասկանալի
յե, յես վոչ վորից չեմ վախենում...

ՆԱՆՏԵՅԻ. Իզուր... Դուք, ըստ յերևույթին, վատ եք ճանա-
չում Զոյային: Նա վոչ մի բանի առաջ կանդ չի ասնի: Յեթե
դուք ձեզ համար չեք վախենում, ապա հիշեցե՛ք, վոր ձեր ընկե-
րուհու գլխին շատ անախորժութեաններ կարող են թափվել: Նա
այնպէս անխոցելի չէ, ինչպէս դուք: Մի մոռացե՛ք այդ...

ԿԼՈՂ. Այո, այո, դուք իրավացի յեք... Սակայն, միևնույն է,
ես պետք է տեսնեմ նրան...

ՆԱՆՏԵՅԻ. Չեք կամքն է, պարոն... Բայց տեսե՛ք, մենք, արիա-

կան ցեղին պատկանող կանայք յերբեք չենք ների ձեզ, վոր դուք
ասիացի կնոջը գերադասել եք մեզանից...

Խորհում յերկուսն են Ու-Շ եւ Գ ու Ռ ա ն ց ր :

ԿԼՈՒ. Ահա նա, յես տեսնում եմ նրան:

ՆԱՆՏԵՅԼ. Մեր սիրելի Ֆրեդերիկսի հետ: Նրան հեռացնելը
յես ինձ վրա յեմ վերցնում, նա վտանգավոր կավարել չե: Ցան-
կանում եմ ուրախ ժամանակ անցկացնեք... Հեռուցեք դարա-
վանդին: (Գնում է նրանց ընդառաջ):

ՌԱՆՑ. Մաղձուկներ, ձեզ այնտեղ վորոհում են:

ՆԱՆՏԵՅԼ. Իսկ յես ամեն տեղ ձեզ եմ փնտրում: Ինձ ձանձր
կծեց...

ՌԱՆՑ. Չմոռնա՛... Ի՞նչ ճանձն... Դա կարող է չափազանց լուրջ
բան լինել... Այստեղի ճանձները խիստ թուշավոր են լինում...

ՆԱՆՏԵՅԼ. Սարսափեյի՛ր յես...

ՌԱՆՑ. Ի՞նչ տեսակ ճանձն եր... Սե հո չե՞ր, փորի վրա վոսկե-
զույն մագեր...

Գնում են դարավանդ: Մինչ այդ Ու-Շ եւ Գ ա ն ց ր անցնում են տաղա-
վար: Բնիկ համարյա դատարկ է: Միայն ետքադայում
վարագույրի յետիվ շարժում է գագցվում: Խորհում յերբեմն
գալիս-անցնում են հյուրերի առանձին խմբակներ ու գույգեր:

ԿԼՈՒ. Վերջապես... Յես մտածում եյի, վոր դուք չեք գա...

ՌԱ-ՇԵՆ. Այդ ավելի լավ կլիներ: Յես մի բոպեյով եմ յեկել,
վորպեսզի կատարեմ ձեր ցանկությունը... ձեր բավական անխո-
հեմ կապրիզը, պարոն...

ԿԼՈՒ. Յես յերբեք չեմ կարող իմանալ, թե ի՞նչ է թագցված
այս խորհրդավոր աչքերում, այս ժպիտում... Դուցե դուք ինձ
խաբուում եք, կամ ծիծաղում եք ինձ վրա...

ՌԱ-ՇԵՆ. Միթե դուք ուրիշ վոչինչ չուենք ինձ ասելու...

ԿԼՈՒ. Դժբախտաբար վոչ մի այնպիսի բան, վորը դուք արդեն
իմացած չլինեք... և վորը, հավանորեն, ձեզ վաղուց ձանձրացրել է...

ՌԱ-ՇԵՆ. Ո՛ր, ինչ տոն ե... (Փաղափում է) Հարկավոր չե...
Յես դրա համար չեմ յեկել: Այնքան ել հեշտ չեք ինձ ազատվել:
Դուք կարծում եք ձեր մանկիկի վրա վոչ վոք ուշադրություն չի՞
դարձնում, վոչ վոք չի՞ ցանկանում նրա հետ պարել...

ԿԼՈՒ. Յես ավելի քան հակառակն եմ կարծում:

ՌԱ-ՇԵՆ. Այո՛... Նշանակում է յես կարող եմ գնալ (Գնալու
տարժում է անում)

ԿԼՈՒ. Ու-Շեն... (Գրկում է նրան):

ՌԱ-ՇԵՆ. (Քննալու) Հիմար մանկիկ, ինչո՞ւ յեք տանջում և
ձեզ, և՛ ինձ...

ԿԼՈՒ. Յես տանջում եմ քեզ, բայց կարծում ես հեշտ է ինձ
համար...

ՌԱ-ՇԵՆ. Ի՞նչ տարորինակ ե... Դուք յեկել եք ոտար, հեռա-
վոր յերկրից: Դուք դուցե շուտով վերադառնաք այնտեղ և, իհարկե,
կմոռանաք ինձ...

Տարավարի յետիվում յերկուսն են Գայան: Հավիլ է պատին յեկ
լում է լարված: Համարյա նույն ժամանակ դարավանդում
յերկուսն է նստել: Նա խոսում է մեկի հետ կիսաշրջան
կանգնած յեկ խաղում է համաձայն անոնցով:

ԿԼՈՒ. Ո՛ր, յերբեք, յերբեք...

ՌԱ-ՇԵՆ. Բոլոր կանանց միշտ միևնույն բանն են ասում: Մի
հավատացրեք, իմ ընկեր... Յես շատ լավ դիտեմ, վոր յես ձեզ
համար զվարճալիք եմ... նոր և մի փոքր արգելված խաղալիք:

ԿԼՈՒ. Դա վերավորական է: Դուք չեք ընդունում, վոր յես
կարող եմ սիրել ձեզ անկեղծ, խորը:

ՌԱ-ՇԵՆ. Ո՛ր, ընդունում եմ, յեթե միայն... Չե՞ վոր մենք ձեր
կարծիքով ստոր ենք, վայրենի, մեր յերակներում կեղտոտ
արյուն է հոսում... Դուք հետաքրքրվում եք ինձանով, վորովհետև
հազնված եմ գեղեցիկ, սանրվում եմ դեմքիս համապատասխան
և... յերբ ուրիշներն ել դեմ չեն ինձ հետ սիրաբանելու... Վիրա-
վորական է: Ինչո՞ւ: Յես կարծում եմ ավելի լավ է ճշմարտու-
թյունն իմանալ, քան խաբել ինքն իրեն: Սիրելիս, յես սովոր
եմ, վոր ինձ վրա նային ինչպես զվարճալիքի: Դա իմ հայրենիքի
կանանց վիճակն է: Իմ ամուսինը բարի յե դեպի ինձ, կատա
բում է իմ փոքրիկ ցանկությունները, բայց յես ինձ միշտ զգում եմ
վորպես առարկա, վորպես խաղալիք: Սե՛ր... Դուք առաջինն
ասացիք ինձ այդ բառը: Յեկ իմ փոքրիկ սիրան առաջին անգամ
տրոփեց...

Ետքադայում, վարագույրի յետիվ իսկ միջ յեկ աղմուկ:

ՌԱ. ՇԵՆ. Լսեցի՞ք... Այդ ի՞նչ է...

ԿԼՈՒ. (Նայում է դեպի դարավանդը) Ո՛ւր է... Չգիտեմ...

ՌԱ. ՇԵՆ. Ո՛ւր եք այդպես ուշադիր նայում...

ԿԼՈՒ. Այնպես... վոչինչ... Մի համբույր ևս, Ու, և յես այլ-
ևս չեմ պահի ձեզ: (Գրկում է նրան) Յե՛րբ կտեսնվինք, վերադառնա՛...
Ինձ մոտ, վաղը, այո՛...

ՌԱ. ՇԵՆ. Հեռախոսով կհայտնեմ:

ԿԼՈՒ. Դու կգաս, չե՞... Դու կրկին իմը կլինես, ամբողջապես,

առանց հազուստի, առանց այս զարդարանքների... Դու... Միայն գու... Բո մարմինը...

ՈԱ-ՇԵՆ. Բավական ե, բավական... Դու ինձ ել կխենթացնես...

Ձոյ ան շարժանակի պտույտ ե տալիս տաղավարը յեվ գնում ե դարավանդի կողմը, հետին պլանով: Նրան նկատելով, Ն ա ն տ ե յ լ ը վայր ե գցում ձեռնոցը:

ԿԼՈՒ. Իսկապես, ժամանակ ե:

ՈԱ-ՇԵՆ. Յեթե մեզ տեսնելին... Դուք պիտե՞ք առաջ այս յերկրում ինչպես եյին վարվում անհավատաբի՞մ կնոջ հետ:

ԿԼՈՒ. Դուք Յրանսիայի հպատակ եք, ձեզ չի կարող այդպիսի վտանգ սպառնալ: (Պանելով նրա ձեռքը) Յեվ այդպես, մինչև վաղը...

ՈԱ-ՇԵՆ. Մինչև վաղը:

Անհայտանում ե տաղավարի յետիվ: Կողք դաճող դուրս ե գալիս իր հերթին: Կալում են ձայներ. «Իսկույն սկսվում ե... Տեղ գրավեցե՛ք...» «Առաջին գանգ»... Աղմուկ, իրարանցում, ծիծաղ:

ՆԱՆՏԵՅԻ. (Առաջանում Չոյայի հետ) Բո ամուսինն ամբողջ ժամանակ հայացքով քեզ եր վորոնում: Հույս ունեմ յես հաջողութեամբ կատարեցի իմ դերը: Նրանք հավատացած են, վոր դու ամբողջ ժամանակ սենյակներում ես յեղել և յես հետևել եմ քո յուրաքանչյուր քայլին: Ի՞նչ տեսար ու լսեցիր...

ՉՈՅԱ. Ավելի, քան հարկավոր եր:

ՆԱՆՏԵՅԻ. Դրան համար դեմքիդ գույն չկա:

ՉՈՅԱ. Դու սխալվում ես: Այժմ յես հանդիստ եմ, սիրելի բարեկամս: Այժմ գոնե յես գիտեմ ինչ անել: Յես մի քանի անախորժ բույներ ապրեցի, բայց այն բույները, վոր ապրելու յե մեկ ուրիշը, ավելի ես անախորժ եմ լինելու...

Ինքն ավելի ու ավելի յե լցվում մարդկանցով:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. (Մոտենալով) Թանկագին տանախրուհի, դուք բոլորովին չեք յերևում...

ՉՈՅԱ. Յես այնքան գործ ունեմ: Հարկավոր ե հոգալ ընթրիքի մասին, հոգալ, վոր ներկայացումն անցնի ինչպես հարկն ե...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Դուք կարող եք հանգիստ լինել: Յերեկոյի տպավորութեան արդեն միանգամայն պարզ ե: Գեներալ նահանգապետն, ըստ յերևույթին, գո՞հ ե...

ՉՈՅԱ. Այո... Յես նույնպես... Պարոն խորհրդական, ներկայացման ժամանակ յես ձեզ ընտրում եմ իմ կավալերը: Վոչինչ դեմ չունի՞ք...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Տիրուհի, յես ուղղակի խոսք չեմ գտնում շնորհակալ լինելու... Բայց պե՞տե ե մտածել ժամանակին տեղ գրավելու մասին:

ՉՈՅԱ. Ի՞նչ կարիք կա... Այնտեղ շատ շուրջ կլինի: Բացի այդ, յես կարծում եմ, վոր Դեոտերային ներկայացումից առաջ ճառ կասի... Այնպես վոր չարժե շտապել: Պարոն խորհրդական, յես կկամեա՞յի ձեզ հետ խոսել մի թեմայի շուրջը... մի բավական տարրերինակ թեմայի... Ձեզ հայտնի յե, վոր յես սիրում եմ բոլոր որեկինալ բաները... և նյութ եմ հավաքում իմ եկզոտիկ վեպի համար...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Յես ամբողջովին ձեր տրամադրութեան տակ եմ, տիրուհի:

ՉՈՅԱ. Յես կցանկանայի իմանալ ձեզանից, վորպես տեղական սովորութեաններին քաջածանոթ մեկից, արդյո՞ք դեռևս գոյութեան ունի անհավատարիմ կանանց մահվան դատապարտող վաղեմի որենքը...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Դժվարանում եմ պատասխանել ձեզ: Հասարակ ժողովրդի մեջ, թերևս...

ՉՈՅԱ. Վոչ, բարձր դասի, մանդարիններին, ուսումնականներին մեջ, վորոնք ունեն նախահայրերի մի ամբողջ շարք... և այդ նախահայրերի հիշատակը հարգում են...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Դուք լավ կանք այդ մասին խոսեք արդարադատութեան խորհրդական Լի-Տուոնգի հետ: Ձեմ կարծում: Թեպետ հին որենքները հարատե են...

ՉՈՅԱ. Իսկ ձեր տանը բազին և նախահայրերի ցուցակ կմ...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Ո՛ր, տիրուհի... Իմ յեվրոպական... համարձակվում եմ ասել, Ֆրանսիական տանը...

ՉՈՅԱ. Նշանակում ե չկա: Յես այդպես ել կարծում եյի: Դուք կատարյալ փարիզեցի յեք: Յեվ յեթե հարկ լիներ, դուք ավելի շուտ սիրալիք ժպիտով կներեյիք հանցավորին, բայց չեյիք դիմի վրեժառութեան այն «բարբարոս» միջոցին, վորը կտակել են ձեզ ձեր նախահայրերը...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Իրոք, ինչ տարրերինակ խոսակցութեան ե, տիրուհի...

ՉՈՅԱ. Յես ձեզ ասել եմ, վոր պաշտում եմ այն ամենը, ինչ եկզոտիկ ե... Յեվ չափազանց հետաքրքրվում եմ եկզոտիկայով: Պիտի խոստովանեմ, վոր անձնապես ինձ այդ արյունուշտ, այդ խորհրդավոր և անեղ որենքն ավելի յե դուր գալիս, քան

ներկայիս զավելչտական դուելները կամ ապահարզանները: Ասացեք, ի դեպ, ըստ այդ որենքի, դավաճանության փաստն ամուսինն անպայման անձամբ պեաք ե տեսնի, թէ բավական ե վկայի... վատահելի վկայի ցուցմունքք... վորի խոսքերին կարելի յե չկասկածել... այնպիսի վկայի, վորը բավական պատվավոր ե բարձր դիրք ունի:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. (Ակնդես նայում ե նրան) Այո, տիրուհի... Դա բավական ե:

ՉՈՅԱ. Այ, տեսնե՛մ եք, դուրս ե գալիս, վոր յես ել մի բան դիտեմ տեղական բարքերից: Յես նույնիսկ լսել եմ, վոր ամուսինը, հայտնաբերելով կնոջ դավաճանությունը, վորի մասին վոչ վոք չգիտե, կարող ե ներել նրան, յեթե ցանկանա: Բայց յեթե դավաճանությունը, ինչպես ասում են, «բոլորի ականջն ե ընկել», յեթե այդ մասին իմացել են ուրիշները, յեթե այդ մասին խոսում են, գուցե ե ծիծաղում, այդ դեպքում նախահայրերի հիշատակը խայտառակության ե մատնվում, վորը կարելի յե մաքրել միայն... ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Մահով: Այո, տիրուհի, դուք իրավացի յեք:

Հին որենքն այդպես ե հայտարարում:
Կառքում:

ՉՈՅԱ. Շնորհակալություն, իմ հետաքրքրությունը բավարարված ե լիովին: Այժմ կարելի յե ներկայացումը դիտել: Կամբոջիի թագավորի պարուհիները պեաք ե վոր դուլթիչ լինեն... Տեսեք, զենեքալ-նահանգապետը կարծեք արդեն վտարի ե յելնում... ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Տիրուհի, յես կամենում եմ ապացուցել, վոր յես իսկապես յեվրոպացի յեմ: Յեթե յես չիմացի լինելի, ձեզ վոչ մի հարց չեյի տա: Բայց յես Ֆրանսիացի յեմ, ուստի թույլ եմ տալիս ինձ հարցնել. այս խոսակցությունը...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Տիրուհի, յես կամենում եմ ապացուցել, վոր յես իսկապես յեվրոպացի յեմ: Յեթե յես չիմացի լինելի, ձեզ վոչ մի հարց չեյի տա: Բայց յես Ֆրանսիացի յեմ, ուստի թույլ եմ տալիս ինձ հարցնել. այս խոսակցությունը...

ՉՈՅԱ. Մենք դեռ կդառնանք դրան: Վաղն ուրախությամբ կայցելեմ նաև արդարագատության խորհրդականին: Նույնիսկ ձեզ հետ միասին, յեթե կամենում եք...

Հաաբակոբյան մեջ շարժում: Այնք. «Բենեյալ-նահանգապետը... «Կառքում» «Ուշադրություն, գեներալ-նահանգապետը պիտի խոսի»:

ԴՆ ՏԵՐԲՅԵ. (Դառավանդում, Ռավեցեսեյի կողմից կանգնած) Պարոնայք, թույլ տվեք ինձ մի քանի խոսք ասել: (Դադար) Այստեղ, ինձ հետ միասին դուք տեսնում եք մի մարդու, վոչն իրապես այս յերեկոյի հերոսն ե... Հերոս վոչ թե փոխաբերական, այլ բառի իսկական իմաստով: Այո... զնդապետ Ռավենշտեյն,

ա՛հա մի անուն, վորը գաղութների պատմությունը կարձանագրի, յեթե կարելի յե այդպես արտահայտվել, իր եջերում, կամ տախտակների վրա: Այո, տախտակներ... (Դադար) Պանդին հաղթողը... Այո... այդ անունով նա կանցնի պատմության մեջ... Նա, մեր գաղութային քաղաքականության լավագույն իրադրոժողը... Ֆրանսիական պրոտեկտորատը Հնդկաչինում ամրապնդված ե այլևս: Ահա վորն ե զնդապետ Ռավենշտեյնի արժանիքը: Այո: Ուստի, պարոնայք, նախ քան կբարձրանա այս փառահեղ ներկայացման վարագույրը, յես առջարկում եմ լսել մեր ազգային մեծ հիմնը...

Նվագում են մարտիլոգ: Վարագույրը բարձրանում ե: Բեմում կախված ե Բուկարեքը:

ՌԱՎԵՆՇԵՅԵ. (Ուազիկն ուճաբեովելով) Դժոխք... Բոսկարեն... ՄԱԺԵՐՈ. Ա՛յ քեզ Ֆոկուս... ԴԵՏԵՐԲՅԵ. Ի՞նչ... Ո՞ւմ... Յես չեմ հասկանում... ՎԻԼՅԵՐ. Յերածշտությունը... Ասացեք յերածիշտներին... Դադարեցնել յերածշտությունը...

Յերածշտությունը դադարում ե:

ՉԱՅՆ ՀԱՍԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՑ. Բռնիր... բռնիր... Փախիր... Պիրատները...

Խառնաշփոթյուն: Իստերիկ հառաչանքներ: Իրարանցում: Հրաձգություն:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Արդարագատության մանգարին Լի-Տուսնդի տանը: Սենյակում բազին:

Լի-ՏՈՒՈՆԳ. Յես ձեզ հրավիրեցի ինձ մոտ, վորպեսզի ձեզ մի քանի հարցեր առաջարկեմ, վորոնք դուք, իսկապես ասած, պիտի սպասեյիք ե վորոնց պատասխանելու համար դուք ժամանակ ունեյիք նախապատրաստվելու: Ձեզ մեղադրում են, վոր դուք, Ուշեհն, կուսակցության ամուսինը, Լի-Դե-Տայի դուստրը, օտարերկրացու հետ անբարոյականություն եք արել: Դուք դիտեք, վոր յես իրավունք ունեյի ձեզ հասարակական տրիբունալի դատին հանձնելու: Բայց, ի հարգա՛տ ձեր ամուսնու ե փառապանձ նախահայրերի անբիժ անվան, մենք վորոշեցինք այս գործը հրապարակ չհանել:

ՈԱ.-ՇԵՆ. (Լուռ Ե):

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. (Դադարից հետո) Գիտնական Իգուեն. Անի ներկա-
յությունը չպետք է շփոթեցնի ձեզ: Նա ամեն ինչ գիտեի: Յե՛վ վոչ
մի տեղ նա ավելորդ լինել չի կարող: Թերևս, հարկավոր ժամին,
նրա բարձր ու ճշմարիտ իմաստության լույսը լուսավորի մեզ բո-
լորես: (Դադար) Յե՛վ այդպես յես սպասում եմ պատասխանի:

ՈԱ.-ՇԵՆ. Պարոն խորհրդական, յես հրաժարվում եմ ձեզ պա-
տասխանել:

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. Ափսոս: Դուք շատ լավ պիտեք, վոր մենք մի
ջոցներ ունենք ձեզ խոսեցնել տալու, նույնիսկ ձեր կամքից
անկախ:

ՈԱ. ՇԵՆ. Տանջվո՞ւք... Ո՛ր, պարոն խորհրդական, մի՞թե դուք
կարող եք վճռել...

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. Յես ուզում եմ հավատալ, վոր դուք չեք հարկա-
դրի մեզ դրան դիմել: Ինչո՞ւ համառել: Ձե՛ վոր մենք ամեն ինչ
գիտենք:

ՈԱ.-ՇԵՆ. Յեթե այդպես Ե, ել ինչո՞ւ յեք ինձ հարցնում:

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. Յես ձեզ կխնդրեյի ինձ հարցեր չտալ: Դուք մի-
այն նրա համար եք այստեղ, վորպեսզի պատասխանեք: Ի նկատի
ունեցեք, վոր կեղծիքը կարող է միայն վատթարացնել ձեր գրու-
թյունը: Բարեհաճեցեք ուրեմն պատասխանել. հանցավոր կապեր
ունեցե՛լ եք ոտարականի՝ Փրանսիական ծառայության մեջ գտն-
վող լեյտենանտի հետ...

ՈԱ.-ՇԵՆ. (Ընդհատելով) Դուք Փրանսիացուն ոտարերկրացի՞ յեք
համարում...

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. Յերկրորդ անգամ մատնանշում եմ, վոր դուք ինձ
այստեղ հարցեր առաջարկելու իրավունք չունիք: (Դադար) Յես
պատասխանի յեմ սպասում:

ՈԱ. ՇԵՆ. Յեթե անգամ յեղել եմ...

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. Նման հանցագործությամբ դուք արատավորել եք
ձեր նախահայրերի հիշատակը: Մի նախատինք, վորը միայն մահ-
վան պատիժը կարող է քաղել:

ՈԱ. ՇԵՆ. Մահվան պատիժը...

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. Դա գուցե անսպասելի յեր ձեզ համար. Ձեր
ամուսնու տանը, անտարակույս, մասամբ նաև նրա հանցանքով,
դարձել եք յեվրոպացի կին և չեք մտածել այն մասին, վոր նախ-
նադարյան որենքի ուժը տարածվում է ձեզ վրա: Դուք գուցե,
նույնիսկ չգիտեք այդ որենքը: Այդ դեպքում յես ձեզ կասեմ...

(Հանդիսավոր տնով) Կինը, վոր ընկնում է անբարոյականության
գիրկը...

ՈԱ.-ՇԵՆ. Նեղություն մի կրեք, պարոն խորհրդական: Յես
լավ գիտեմ ինչ է ասում այդ որենքը, վորը բոլոր առաջավոր
մարդիկ, նույն թվում նաև իմ ամուսինը, վորքան հայտնի յե
ինձ, համարում են վաղուց իր ժամանակն ապրած...

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. Ավելի վատ: Դուք անձնական փորձով համոզվեցիք,
վոր նա իր ժամանակը չի ապրել և գոյություն ունի մինչև այժմ:

ՈԱ.-ՇԵՆ. Դոյություն ունի Փրանսիական պրոտեկտորատում...
Իրոք դա ինձ համար նորություն է... և անսպասելի նորություն...

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. Այդ խոսքերի պատասխանը կստանաք մի քանի
բողոքից և այն ել վոչ ինձանից: Յե՛վ այդպես որենքը ձեզ հայտ-
նի յե...

ՈԱ.-ՇԵՆ. Այնչափ, վոր նույնիսկ յես չեմ կարող չզարմանալ:
Ո՞վ է ինձ մեղադրում... Ամուսինս: Դա դեռ բավական չէ նույն-
իսկ հին որենքով, վորը պահանջում է վստահելի վկաների ցուց-
մունք: Ո՛ւր են նրանք... Յես չեմ տեսնում նրանց...

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. Դուք իրավացի յեք: Իսկույն դուք նրանց կտես-
նեք: (Նշան է անում):

Տ ա ո ճ լ ու ռ ք ա Յ անում ձախ կողմի դուր յեվ ներք քաղնում
Ձ ո յ ա Ռ ա ն ց ի ն:

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. Ահա ձեզ մեղադրողը:

ՈԱ.-ՇԵՆ. Ինչպե՞ս... Այս տիկինը...

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. (Ձայախն) Տիրուհի, մի մերժեք այստեղ, մեղա-
դրյալի ներկայությամբ կրկնել ձեր ցուցմունքները:

ՁՈՅԱ. Յես կարող եմ ասել այն, ինչ տեսել եմ ու լսել ան-
ձամբ: Իմ տանը, ի պատիվ գնդապետի տված հանդիսավոր յե-
րեկույթին այս տիկինը և մի մարդ, վորի անունն արդեն հայտ-
նել եմ ձեզ առաջուց, առանձին տեսակցություն ունեյին:

ՈԱ.-ՇԵՆ. Դա ցուցմունք է... պարոն խորհրդական: Հավաստի
ցուցմունք...

ՁՈՅԱ. (Բռնկվելով) Յես կկրկնեմ ձեր սեփական բառերը, յեթե
չամենում եք...

ԼԻ-ՏՈՒՈՆԳ. Բարեհաճեցեք կրկնել, անկախ այն հանգաման-
քից, մեղադրյալը կամենում է թե վոչ: Դա Եյական չէ:

ՁՈՅԱ. Համեցեք, (Դառնալով ՈԱ.-ՇԵՆԻՆ) Դուք ասացիք. «Դուք
առաջինն ասացիք ինձ սեր բառը և իմ փոքրիկ սիրտը առաջին
անգամ արոպիեց»... Հետո դուք համբուրվեցիք...

Լի-ՏՈՒՈՆԳ. Իսկ համախոհի խոսքերը դուք չե՞ք հիշում:
ՁՈՅԱ. (Հուզված) Դա... Հարկավոր ե..

Լի-ՏՈՒՈՆԳ. Բարեհաճեցե՛ք:

ՁՈՅԱ. (Տառապանով) Նա ասաց. «Դուք կրկին իմը կդառնա՞ք՝
ամբողջպետ, առանց զարդարանքների, դու... միայն դու... քո
մարմինը»... Յե՛վ համբուրեց ձեզ...

Դադար

Լի-ՏՈՒՈՆԳ. Տիկին Ու-Շեն, դուք ընդունում եք այս ցուց-
մունքի ճշմարտությունը: Թե՛ մտադիր եք ժխտել:

Ու-Շեն. (Խոր վաղուցյան) Այդ գիշեր յես հյուր եյի, իսկ այդ
տիկինը տանտիրուհի: Յես հյուրաստիություն որենքները խախ-
տած կլինեյի, յեթե ասեյի, վոր նա ստում ե... կամ ականջ դնե-
լով, նա վատ ե լսել:

ՁՈՅԱ. Ականջ դնել... Ինչպե՞ս եք համարձակվում... Յես լսեցի
պատահաբար... Դուք այդպես ազատ... այդպես անամոթաբար...

Լի-ՏՈՒՈՆԳ. (Ընդհատելով) Դա մեզ չի հետաքրքրում, տիրու-
հի: (Ու-Շենին) Տիկին Ռանցը Ֆրանսուհի յես: Մեր հյուրաստիու-
թյան որենքները նրա համար նույնպես քիչ արժեք ունեն, ինչ-
պես մեր ամուսնական կողքքսի նորմաները ձեզ համար: Յե՛վ այդ-
պես, դուք չեք հերքում ցուցմունքը...

Ու-Շեն. Պարոն խորհրդական. այս կինը ստում ե՛ ասելով,
վոր լսել ե «պատահաբար», նա ականջ ե դրել, յես պնդում եմ
այդ: Նա ինքը սիրում ե լեյտենանտ Ռավենշտեյնին: Նա վրեժ ե
լուծում ինձանից, վորպես իր ախոյանի... Յե՛վ դուք դա համա-
րում եք անաչառ ցուցմունք...

ՁՈՅԱ. Ճիշտ չե... Դուք եք ստում... Դուք և վոչ թե յես...

Լի-ՏՈՒՈՆԳ. Խնդրում եմ դադարեցնեք այդ անողուտ հակա-
ճառությունը: Մեզ փաստ ե հարկավոր: Փաստը սահմանված ե,
մեղադրյալը խոստովանեց: Այլևս վոչինչ պետք չե մեզ: (Բազկաքա-
ռից յեղնում ե յե՛վ բաց ե անում աջ կողմի դուռը) Բարեհաճեցե՛ք
ներս գալ:

Ներս ե գալիս Կ ու ա մ գ-Ս ի մ գ ը մանգաքիմի՝ հագուստով:

Լի-ՏՈՒՈՆԳ. Մանդարին Կուանդ-Սինգ, ձեր ամուսինը խոստո-
վանեց ամեն ինչ: Ձեզ ե մնում պատժի տեսակն ընտրելը:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Շատ լավ: Իմ ընտրությունը յես արել եմ: Յես
կանջ եմ առել պատվավոր պատժի վրա, վորը կգոհացնի իմ
հայրերին: Թող հանցագործի գլուխը դրվի սալ քարի վրա և փրկե-
լի վոտքով տրորե այն...

Լի-ՏՈՒՈՆԳ. Թող այդպես լինի: Ամեն ինչ պատրաստ ե:
Ու-Շեն. Յես անձնատուր չեմ լինի, յես կպայքարեմ... կա-
ղաղակեմ.

Լի-ՏՈՒՈՆԳ (Ուսերը բոբվելով) Անողուտ ե: Վոչ վոք չի լսի:
Ձեզ կարող ես ստիպել լուրու: Ավելի լավ ե յենթարկվեք ան-
խուսափելիին...

Ու-Շեն. Դուք իրավունք չունիք... Ֆրանսիական որենքն ար-
գելում ե այդպիսի բարբարոսություն... Յես Ֆրանսական քաղա-
քացի յեմ...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. (Մտեցնելով նրան) Դուք իմ կինն եք և իմ
ստորուկը, վոր խախտել ե հավատարմության պարտքը և ուրիշ
վոչինչ:

Լի-ՏՈՒՈՆԳ. Դուք մոռանում եք, թե ինչպիսի վկա յե ցուց-
մունք տալիս ձեր դեմ: Դուք այստեղից այլևս դուրս չեք դա, իսկ
տիկին Ռանցը լուռ կմնա այս ամենի մասին:

ՁՈՅԱ. Բացի դրանից, յեթե ուրիշները խոսեղու լինեն, յես
կարող եմ արգելել նրանց:

Ու-Շեն. Ահա թե ինչ... Ո՛ր, դուք... Վոչ, այդպիսի ստորու-
թյան, այդպիսի վրիժառություն յես ընդունակ լինել չեյի կա-
րող... Յե՛վ դուք ձեզ համարում եք յեվրոպացի կուլտուրական
կին...

ՁՈՅԱ. Վրեժ... Ինչ վրեժ... Մենք, Ֆրանսիացիներ հարգում
ենք յերկրի հին սովորությունները: Մենք չենք խառնվում տե-
ղական արդարադատության գործերում: Ավելին: Մենք պարտք
ենք համարում ողնել այդ արդարադատությանը:

Լի-ՏՈՒՈՆԳ (Գլուխ ե ցալիս) Ընդունեցե՛ք մեր շնորհակալու-
թյունը, տիրուհի:

ՁՈՅԱ. Յես պիտի հեռանամ:

Լի-ՏՈՒՈՆԳ. Դուք ազատ եք:

ՁՈՅԱ. (Անվճռական) Իհարկե, յես իրավունք չունեմ ներկա
դանվելու պատժի գործադրմանը...

Լի-ՏՈՒՈՆԳ. Տիրուհի, մենք վստահ ենք ձեր համեստության
վրա: Յեթե կամենում եք, վոչինչ չի խանգարում ձեզ մնալ...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Առավել ևս, վոր դուք տեղական կենցաղից
վեպ եք գրում: Ձեզ համար կարող ե հետաքրքիր լինել...

ՁՈՅԱ. Ո՛ր, պարոնայք, դուք այդպես սիրալիր եք... Շնորհա-
կալ եմ: Այդ դեպքում յես մնում եմ...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Մենք կարող ենք սկսել...

Իգուեն-Ան, ներեցեք ինձ... Այստեղ այնպես շոգ ե... Յես վատ եմ հասկանում, իմ մտքերը պղտորվում են...

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Տիրուհի, դուք սքանչելի կերպով զարմանք և անզիտուլթյուն եք պատկերացնում, սակայն իմ առաջ դուք իզուր եք հոգնություն պատճառում ձեզ դրանով: Յես զիտեմ բոլորը, ինչպես իրավացի նկատեց մանդարին Լի-Տուոնգը: Յես ամեն ինչ գիտեմ: Բայց դուք կարող եք չվախենալ իմ անհամեստությունից: Այս ականջները շատ արյունալից և սոսկալի դադանիքներ են լսել: Մեկով ավելի կամ պակաս — իմ հասկում նշանակութուն չունի: Սակայն յես պարտք եմ համարում ձեզ նույնպես ասել, ինչպես ասել եմ ուրիշներին, վոր այս վրիժառուլթյունը շատ փորձանքներ և վիշտ կրերի շատ անպեղների: Դու չեք մտածել, թե վորքան արյուն կթափվի ի հատուցումն լեյտենանտ Ռա-նդտեյնի մահվան...

ՉՈՅԱ. Մահվան... Նրա մահվան... Ո՛ր, դուք ինձ կխելագարացնեք... Ո՛վ ե այդ մասին ասում...

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. (Ուտերը բարվելով) Շատ լավ: Թողնեք դա, տիրուհի...

ՉՈՅԱ. (Իրեն կարգած) Վոչ... սա թակարդ ե... յես ծուղակն եմ ընկել... Յես վաղ կտամ ձեզ իրենցիա... յես կասեմ... (Վազում ե դեպի դուր):

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Կանգ առեք... Ի՞նչ կասեք:

ՉՈՅԱ. (Խելացնորվածի նման). Վոր նրան մահ ե սպանում...

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Ի՞նչ... Վհրտեղ... Ինչո՞ւ... Դուք կարող եք այս հարցերին պատասխան տալ... Բոլորը կծիծաղեն, կամ խելագարի անզ կընդունեն ձեզ... Մոտ յեկեք... (Չոյան դանդաղ մտնում ե) Կեցեք...

ՉՈՅԱ. (Նստում ե հոսակին, բազկաբորի մտ):

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Նախագրուշացնում եմ ձեզ, վոր վոչ մի տանջանք չի կարող հարկադրել ինձ վորեւ բառ արտասանել, յեթե յես չցանկանամ: Նա, ով վաղուց իր ազատման ժամին ե սպասում, տանջանքից չի վախենում: Հետևապես, մի յենթադրեք, վոր դուք կարող եք հիմնվել իմ ցուցմունքների վրա: (Պառզա) Յես այժմ տեսնում եմ, վոր դուք իսկապես վոչինչ չեք իմացել... Իժբախտաբար յես ձեզ շատ ավելորդ բան ասացի, ուստի ստիպված եմ շարունակել, վորովհետեւ այժմ ձեզ անզիտուլթյան մեջ թողնելն աննպատակ անդթություն կլինի: Իմացեք ուրեմն. — Ուտենին պատժելու համար վոչ մի դատ հարկավոր չեր: Մահվան

պատասխանում անհավատարիմ ամուսինը ուղղակի կկորչեր, ինչպես քարը սև ջրում: Բայց վիրավորող Ֆրանսացին, գնդապետ Ռավենշտեյնի վորդին չի պատկանում նրանց թվին, վորոնց հետ կարելի յե հեշտությամբ հաշիվ մաքրել: Նրա վերաբերմամբ վոչ գետի ալիքները, վոչ վագրի ճանկերը մահվան պատժի վստահելի և անվտանգ միջոց լինել չեն կարող: Նա չափազանց թանգ արժե: Չափից ավելի աչքեր են հետևում նրա յուրաքանչյուր շարժման: Ուստի վորոշված ե նրան այլ կերպ վերջացներ

ՉՈՅԱ. Վերջացնել նրան... Սպանել... Ո՛ր, աղաչում եմ... հայտնեցեք ինձ ամեն ինչ... Յես պետք ե իմանամ նրանց բոլոր դատավորությունները... Դուք Ֆրանսիայի և Ֆրանսիացիների բարեկամն եք:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Դուք սխալվում եք, տիրուհի: Յես բարեկամ եմ մարդկանց: Յերկիրը, ուր ծնվել են նրանք և այն անունը, վորով կոչվում են նրանք, ինձ համար նշանակութունից զուրկ ե: Բարոյական որենքը պահանջում ե, վորպեսզի յուրաքանչյուր հանցագործություն իր պատիժը կրի: Իսկ նա, կրկնում եմ, հանցավոր ե ավելի քան Ու-Շենը: Յես արդեն ասացի, վոր ինձ սարսափեցնում ե մահվան այն ծովը, վորն առաջանայու յե դրանից հետո Դե լսեցեք, Ու-Շենը պիտի վրիժառուներ ի համախոհ դառնա և լեյտենանտ Ռավենշտեյնին հրապուրի ծուղակի մեջ գցելու...

ՉՈՅԱ. Ի՞նչ նենդություն... Ո՛ր, յեթե յես իմանայի, այն պիրատի պես լեզուս կկծեյի...

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Վորին տանջեց ձեր սիրածի հայրը: Գուցե դա ավելի լավ կլիներ: Ու-Շենը չի կասկածում, վոր իրեն մահ ե սպանում և կհամաձայնվի այն բոլոր պայմաններին, վոր արվում ե այժմ իրեն: Պայմանն այն ե, վոր նա վաղը յերեկոյան: Ժամը ինը և կեսին հրապուրի նրան «Յոթ Արագիլների» մեհյանը: Դուք ճանաչում եք այդ տեղը: Նա համարվում ե արգելված և Ֆրանսիական իշխանությունը խորհուրդ չի տալիս յեվրոպացիներին խախտել այդ արգելանքը: «Յոթ Արագիլների» մեհյանը պղծողը տեղական որենքից դուրս ե և այնքան ել չի պաշտպանվում Ֆրանսիական որենքի կողմից: Յեղել են գեպքեր, յերբ մեհյանի շեմքն անցած մարդիկ կորել են անհայտ, իրենց յետևից չթողնելով վոչ արյուն, վոչ դիակ և, նույնիսկ յես ինքս չզգիտեմ նրանց վիճակի մասին: Այդպես կարող ե անհայտանալ նաև լեյտենանտ Ռավենշտեյնը, և նա կկորչի, թեկուզ գնդապետը, լեյտենանտ Ռավենշտեյնը, և նա կկորչի, թեկուզ գնդապետը, ի հատուցումն նրա մահվան, հրամայի յերկրի յերեսից ջնջել Սոն-

տայր: Յես նախազգուշացրի, վոր այդ վրեժն անխուսափելի յե-
վոր նա կուր կլինի այնպես, ինչպես վիրավորված զազանի վրեժը,
սակայն անհամեմատ ավելի սոսկալի: Այնուամենայնիվ իմ ձայնը
պիտի լռեր վրիժառության ծարավի և զայրույթի ձայնի առաջ:

ՉՈՅԱ. Յե՛վ նա կհամաձայնվի... Նա, վորը սիրում ե նրան...
ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Յեթե ձեր գլուխը պառկեր սալ քարի վրա և
փիղը բարձրացներ իր վտառը... Հավատացած եք, վոր դուք
նույնպես չեյիք համաձայնվի... Վախենում եմ, տիրուհի, վոր դուք
սխալվում եք...

ՉՈՅԱ. Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ յես...
ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Չգիտեմ: Կարծում եմ, այժմ արդեն ուշ ե... նա-
խազգուշացրեք, վոր նա չզնա «Յոթ Արազի լիների» մեհյանը:

ՉՈՅԱ. Նախազգուշացնել... Նա ինձ չի լսի...
ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Ասացե՛ք, վոր նրան մահ ե սպառնում:

ՉՈՅԱ. Ավելի շուտ կգնա: Նա քաջ ե և հպարտ, մի՞թե կարե-
լի յե նրան հետ պահել զրանով...
ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Յեթե այդպես ե, նա կորած ե:

ՉՈՅԱ. Վճչ, վճչ... Յես կփրկեմ նրան... Յես իշխանության
կմտնեմ այս սատանայական ծրագիրը...

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Այդ դեպքում դուք պետք ե ձեր կտակը գրեք:
Պետք ե այդ անեք դեռևս այսօր, վորովհետև վաղվան օրը դուք
այլևս չեք տեսնի: Յեթե վրիժառուի ձեռքը հասնում ե զնրապետ
Ռավենշտեյնի վորդուն, մի՞թե նա կթուլանա ձեր հանդեպ... Մատ-
նության առաջին խկ բառը ձեր դատավճիռը կզառնա: Դուք
պատրաստ եք դրան:

ՉՈՅԱ. (Լուռ ե):
ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Տիրուհի, մի մեղադրեք ուրեմն նրան, վորը ձեզ
նման հիմա իր կյանքն ավելի թանգ ե զնահատում, քան նրա
կյանքը:

ՉՈՅԱ. Ի՞նչ անել հապա... Յես չեմ վախենա մահից, յեթե
համոզված լինեմ, վոր զրանով կազատեմ նրան... Բայց ինձ կարող
են չհավատալ, վոչ մի ապացույց չկա: Այժմ ռեզիդենցիայում բո-
լորն զբաղված են Պանգով: Հավանական ե, ինձ չլսեն նույնիսկ:
Իսկ յեթե յես զնրապետին անանուն նամակ գրեմ... Նա չափու-
զանց սիրում ե վորդուն... Նա մեհյանը զինվորներով կզբաղվի...
ԻԳՈՒԵՆ ԱՆ. Սը՛սա... Նրանք վերադառնում են...

Ներս են գալիս յերկու մանդարինները: Ֆ ա ռ Ե բերում ե ուժա-
պառ Ո ա - Շ Ե Ե Ե Ի Ե: Նրանց յետևից գալիս ե կոնգային:

Լի ՏՈՒՈՆԳ. Իմաստուն Իգուեն-Ան, մենք ուրախ ենք, վոր
ձեզ դեռևս տեսնում ենք այստեղ: Այս կինը մերժեց պայմանը,
վորը նշանակեց նրան իր ամուսնու ներողամտությունը, վորպես
փրկանք իր կյանքի: Յես այստեղ չեմ խոսի այդ պայմանի մա-
սին — նա չնչին ե և անձնակամ: Մերժելով այն, այս կինը հայտ-
նաբերեց անդիտակից և անմիտ համառություն: (Ու-Շոնի) Իմա-
ցեք, միևնույն ե, դուք ոգնել չեք կարող: Այն, ինչ պիտի կա-
տարվի, կատարվելու յե, միայն թե այլ կերպ և ավելի ուշ թերևս...

ՉՈՅԱ. (Շարժում ե գործում: Իգուեն-Անի հայացքը հարկադրում
ե նրան լուրի):

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Իմաստուն Իգուեն-Ան, արդարացի՞ կլինի, յե-
թե հանցապարտի մերժումից հետո վճիռը զործադրվի:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Արդարացի կլինի, այո:
Լի-ՏՈՒՈՆԳ. Կոնգայի, արձակեցեք նրա մազերը: Ֆատ, սոսա
առաջնորդներին, վորպեսզի պատրաստվեն:

Ֆ ա ռ Ե գնում ե: Կոնգային արձակում ե Ո ա - Շ Ե Ե Ի մազերը:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Յերեք բոպեյից ամեն ինչ կվերջանա: Տարեք
նրան:
Կոնգային դաճաղ քայլերով տանում ե Ո ա - Շ Ե Ե Ի Ե դեպի
պուները, ոգնելով նրան:

ՈՍ ՇԵՆ. Ազ ստեցե՛ք...
Յետևի պիտակ պատի վրա յերկուսն ե վրի սովերը:

ՈՍ ՇԵՆ. Գթացե՛ք... Յես համաձայն եմ... Յես ամեն ինչ կա-
նեմ... Յես համաձայն եմ... (Հեկեկալով րնկնում ե գետին):

Լի-ՏՈՒՈՆԳ. Շատ լավ: Յե՛վ այդպես, վաղը ժամը ինը և կե-
սին: Բարեհաճեցեք գրել այն, ինչ կասեմ:

ՈՍ ՇԵՆ. (Չոյայի) Դուք մենակ ինձ չկործանեցիք... Ուրա-
խացե՛ք...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Յե՛վս մի բառ և դուք կմեռնեք անխնա:
(Չոյայի) Տիրուհի, այն, ինչ տեղի յե ունենում այժմ այստեղ,
ընտանեկան գործ ե... և զուրկ հետաքրքրությունից... Մենք ներո-
ղություն ենք խնդրում...

ՉՈՅԱ. Յես հասկանում եմ: Ներեցե՛ք... Յես գնում եմ...
ԻԳՈՒԵՆ-ԱՆ. (Թեփվելով նրա կողմը, շուրջով) Արեք այնպես,
ինչպես ուզում եյիք — նախազգուշացրեք հորը...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Տիրուհի, այն ինչ տեսաք ու լսեցիք այստեղ,
ցանկալի յե և անհրաժեշտ, գաղտնի պահել: Վորովհետև հանցա-
պարտը ներված ե և ձեր յետևից դուրս կգա այստեղից, շարունա-
կելու իր գոյությունը... Այս բոպեյից այստեղ տեղի ունեցածի

ժասին վորևե խոսակցություն... Մենք հավատում ենք ձեր համեստության...

ՁՈՒՅՆ. Ապահով յեղեք, պարոն: Յես գիտեմ լուռ մնալ (Գնում ե):
ԿՈՒԱՆԳ. ՍԻՆԳ. (Ու-Շենին, ցույց տալով բագինը) Բարեհաճե-

ցեք մոտենալ:

ՈԱ-ՇԵՆ. Մոտենում ե յե՛ս: Անիւսյիւ ուրում ե նրան:

ԿՈՒԱՆԳ. ՍԻՆԳ. Այստեղ ձեր կողմից անարգված այս բագինից ձեզ են նայում նախահայրերի սովերները և սպասում, վորպէսզի դուք արդարացնեք ձեզ շնորհված ներումը: Յե՛վ այդպէս, գրեցեք...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՀԻՆԿԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

«Յոթ Արագիւնների» մեհյանը:

ԿԼՈՒ. Ինչո՞ւ յեք այս տեղն ընտրել, սիրելիս: Յեթե առանձնություն եք ուզում, այստեղ այնքան ել առանձնացած չէ: Վորքան յես պիտեմ, մաքսանենգների խմբերը հաճախ են այցելում այստեղ... Յես լսել եմ, վոր այս մեհյանում կան ստորերկրյա անցքեր, վորոնք հին միջնաբերդի տակով տանում են մինչև Կարմիր գետը և աստված գիտե, ելի ուր... Բացի այդ, մեզ սպիտակներին համար սա արգելված վայր ե: Յե՛վ յեթե իմանայի, վոր մեր տեսակցություններն այստեղ են տեղի ունենում...

ՈԱ-ՇԵՆ. Վոչ վոք չի իմանա: Փառն դռներում պահակ ե կանգնած, վտանգի դեպքում նա մեզ կնախազգուշացնի:

ԿԼՈՒ. Դուք վստահ եք նրա վրա... Ինձ այդ լուսկյաց մարդը դուր չի գալիս, պարզն ասած: Յես յերբեք չեմ լսել, վոր նա թեկուզ մի բառ արտասանի:

ՈԱ-ՇԵՆ. Փառն շատ նվիրված ե...

ԿԼՈՒ. Ո՞ւմ... ձեզ, թե՛ ձեր ամուսնուն... Այդ միևնույն բանը չէ... Սիրելիս, չկարծեք, վոր յես ինձ համար եմ յերկյուղ կրում: Ի՞մ բրաունինգն ինձ հետ ե, թեև դա այնքան ել քաղաքավարի չէ տեսակցության գալ գեներով: Սակայն այս մեհյանում յես առաջին անգամ գգում եմ, վոր իմ խոյանը Ֆրանսացի վորևե բուրժուա չէ, այլ չինացի յե... այս առեղծվածային կուռքի ժառանգը: Նայեցեք, ինչ տհաճ կերպարանք ե: Այնքան ել գրավիչ չէ, պետք ե խոստովանել... Դուք գիտե՞ք ինչ լեգենդ ե կապված այս կուռքի հետ...

ՈԱ-ՇԵՆ. Այո, գիտեմ...

ԿԼՈՒ. Իբրև թե ոտարերկրյա հարստահարիչները լուծը թոթափելու ժամը հնչելուց առաջ, այս բրոնզյա կուռքը պիտի խոսի...

ՈԱ-ՇԵՆ. Դա հին, պարզամիտ հեքյաթ ե:

ԿԼՈՒ. Վորը, սակայն, դուրկ չե ումանտիլմից, ճշմարիտ չե... Գիտե՞ք, անգլիական մի վեպում հերոսը հարցնում ե իր տիրոջը՝ «Յե՞րբ կբարձրանա իմ պաշտոնը», իսկ տերը պատասխանում ե. «Վոչ այսոր»... Սքանչելի պատասխան ե, ճիշտ չե... Այդպես ուրեմն, յեթե այս բրոնզյա լորդին հարց տրվի՝ «Յե՞րբ եք խոսելու դուք վերջապես», նա կպատասխանի...

ՁԱՅՆ. (Կարծես կուռքի կրճից) Այսոր:

ԿԼՈՒ. Այս ի՞նչ ե... Ո՞վ պատասխանեց...

ՈԱ-ՇԵՆ. (Դողտահար) Արձագանքը... Յերեի քար պոկվեց մի տեղից...

ԿԼՈՒ. Ի՞նչ արձագանք... Յես պարզ լսեցի... թե՛ դա ձեր անպիտան փառն կատակ արեց...

ՈԱ-ՇԵՆ. Վոչ, նա չէ... Գուցե քամիներ պատի ձեղքից...

ԿԼՈՒ. Հավանական ե... Այլևս վոչինչ չի լսվում... Ներվերի խաղ ե, պլյուս այստեղի չարագուշակ արձագանքը: Ի՞նչ մուսյ տեղ ե... Ինչո՞ւ յեք ինձ այստեղ բերել... Մեր սերը...

ՈԱ-ՇԵՆ. Մեր սերը... Կրո, ճշմարիտ ե, դուք ինձ սիրում եք: ԿԼՈՒ. Սիրելիս, պետք ե ձեզ ասեմ, վոր սիրո մասին լավ ե, յերբ խոսվում ե սկզբում... իսկ հետո...

ՈԱ-ՇԵՆ. Իսկ հետո...

ԿԼՈՒ. Հետո... հետո արգեն... դե, պարզ չե...

ՈԱ-ՇԵՆ. Ասացեք, յեթե ձեզ սպառնային մահով և պահանջեյին, վորպէսզի դուք ինձ թշնամիների ձեռքը հանձնեյիք, դուք կհամաձայնեյի՞ք...

ԿԼՈՒ. Դուք կամենում եք այսոր հիմար հարցերի մրցանակ շահել:

ՈԱ-ՇԵՆ. Իսկ դուք ձեր առաջ տեսել եք մահը... Մոտիկ, դեմ առ դեմ...

ԿԼՈՒ. Ինչպէս այս կուռքը... Յենթադրենք վոչ, սակայն միևնույն ե...

ՈԱ-ՇԵՆ. Մենք բոլորս այդպէս ենք ասում... Իսկ յերբ նա մոտենում ե, յերբ սպիտակ պատի վրա յերկում ե նրա անագին, անուխի սև սովերը...

ԿԼՈՒՆ. Ո՛ր, ի՞նչ է պատահել ձեզ... Դուք հիվանդ եք...

ՈՍ. ՇԵՆ. Ո՛ր, դուք չգիտեք... Դուք չեք կարող իմանալ... Ահա-
գին փիղը բարձրացնում է վոտքը... Բուժ, անգուժ, անխիղճ,
ինչպես ինքը բախտը... Յե՛վ այս փոքրիկ գլուխը նրա վոտքի տակ
է... ճգմված... Յե՛վ ուղեղը ցայտում է բակի տաք քարերին...

ԿԼՈՒՆ. Դուք ջերմում եք: Հեռանանք այստեղից:

ՈՍ. ՇԵՆ. Այո, հեռանանք, սիրելիս... փախչենք շուտ... Տար
ինձ թևերիդ վրա, թագցրու ինձ քո տանը, պահապան կանգնիր
ինձ մոտ և յես ամեն ինչ կասեմ քեզ: Դու կհավատաս... դու
կհավատաս, վոր յես այնուամենայնիվ սիրում եյի քեզ:

Լավում է փողախարուքյան ձայներ:

ՈՍ. ՇԵՆ. Ուշ է... չափազանց ուշ...

ԿԼՈՒՆ. Այս ի՞նչ է... Փողերի ձայն... Զինվորներն այստեղ...
այս ժամանակ... Ինչո՞ւ...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. (Յերեվում է մքուրյունից, խորում) Նրանք
ձեզ են վորոնում, լեյտենանտ Ռավենշտեյն...

Դառն մեջ, փակելով նրանց տառը, հայտնվում է Ֆառն:

ԿԼՈՒՆ. Պարոն խորհրդակալան...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Դուք չեյիք սպասում հանդիպել ինձ այստեղ,
ձիջտ ե... Դուք չեյիք յերևակայի, վոր մենք կհանդիպենք վորեւե
մեկ այլ տեղ, բացի իմ հյուրասենյակից, ուր դուք յերաժշտու-
թյամբ եյիք զբաղվում, համբույրների նվագակցությամբ... Այժմ,
ինչպես տեսնում եք, մենք հանդիպեցինք...

ԿԼՈՒՆ. Ա՛... Սա ծուղակ է... Դավադրությունն...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Վո՛չ, սա ուղղակի հատուցման ժամն է: Համ-
բուրելով իմ կնոջը, դուք ինձ չեկ եք տվել, պարոն լեյտենանտ,
չեկ ձեր վողջ կյանքի...

ԿԼՈՒՆ. Ահա թե կուռքի ձայնն ռևան եր... Ահա թե ո՞վ արտա-
սանեց «այսօր» բառը:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Այո, այսօր: Յես պահանջում եմ հատուցել ըստ
չեկի: Նախազգուշացնում եմ, վոր հետաձգել չի կարելի...

Ֆառն Կլուգից քիչ հեռու աննկատելի կռուում է յե՛վ սեղմում
հատակի ֆորքից մեկը, վորը դանդաղ շուտ է գալիս, բաց անե-
լով մուք անդունդը:

ԿԼՈՒՆ. Յես պատրաստ եմ ամեն ժամ: Մի՛թե դրա համար հար-
կավոր եր ինձ այստեղ հրապուրել... Դուք չափազանց շրջահայաց
մարդ եք, պարոն մանդարին... և չափազանց... զգուշ...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Դուք ինձ չափազանց մեծ պատիվ եք անում,
պարոն: Յես այն աստիճան ֆրանսացի չեմ, ինչպես յենթադրում

եք: Մենք ստրուկներ ենք, վոր հարկադրված ենք սողալ հարստա-
հարողների առաջ, շողոքորթել նրանց, համբուրել մեզ հարվածող
ձեռքը: Մենք սարկաբար ընդորինակել ենք մեր տերերից շատ սո-
վորություններ, սակայն դեռ վո՛չ բոլորը: Վո՛չ բոլորը, պարոն
լեյտենանտ: Ֆրանսիայում ձեր պատիվը զողացողից դուք վրեժ
եք լուծում՝ նրա գնդակի և սուսերի առաջ զննելով ձեր կուրծքը:
Մենք այլ կերպ ենք վարվում: Մենք վրեժ չենք լուծում, այլ մի-
այն պատժում ենք:

ԿԼՈՒՆ. Ստոր դավաճան...

Փողերի ձայնը մոտենում է:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Լսո՞ւմ եք... Դա ձեր հայրն է վորոնում ձեզ,
իր սիրելի վորդուն: Նրան նախազգուշացրել են, վոր դուք ոգնու-
թյան կարիք եք զգում: Նա շտապում է մեհյանը դրավելու իր
զինվորներով, բայց դժբաղդաբար նրան սխալ տեղեկություն են
տվել: Յեթե նա կես ժամ շուտ գար, կարող եր փրկել ձեզ: Այժմ
նա չի հասնի:

Ո ա-Շ է ն ը վագում է դեպի դուռը:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Ֆառ...

Ֆառն լուռ հարվածում է Ո ա-Շ է ն ի կրծքին: Նա վայր է գոր-
վում:

ԿԼՈՒՆ. Անզգամ... դու կարծում եյիր վոր յես անդեն կլինեմ...
Դու սխալվել ես:

Կրակում է Կ ու ա ն գ-Ս ի ն գ ի վրա: Վրիպում է: Ֆառն, վոր
հարձակվել է նրա վրա յետվից, բռնում է նրա ձեռքը, վորով
առբանակն է պահել: Հուսահատ պայթար:

ԿԼՈՒՆ, Ոգնեցե՛ք... Ազատեցե՛ք... Ազա՛... (Անհայտանում է սե՛վ
բացվածում: Լուրջում):

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Ամեն ինչ վերջացավ: Իմ վրեժը լուծված է:
Շնորհակալ եմ Ֆառ, դու հավատարիմ ծառա յես:

Բեմի յետիվ գեմերի շոխը, ազմուկ: Ներս է վագում գնդապետ
Ո ա վ է ն շ տ է յ ն ը ս ո մ կ ի ն յ ա մ զ ն վ ր ն ր ի հ ե տ: Մեհյանը լու-
սավորվում է քահերի լույսով:

Ո Ա Վ Ե Ն Շ Տ Ե Յ Ն. Ա՛յս կողմ... Ա՛յս կողմ... Բռնեք բոլոր մուտ-
քերը... Ահա նա, այդ կինը... Յես տեսնում եմ նրան... Զահ...
Լույս... Լուսավորեցե՛ք ավելի... Ո՛ւր է նա...

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. (Յույց տալով բացվածը) Այստեղ: Իդուր մի
կանչեք նրան, նա չի լսի ձեզ...

Ո Ա Վ Ե Ն Շ Տ Ե Յ Ն. Մանդարին Կուանդ-Սինդ... Դուք այստեղ...
Աստված իմ... Մի՛թե մենք ուշացել ենք... Վո՛չ, վո՛չ, այդ անկա-
րելի յե... Փրկել նրան... Փրկել...

կրճքին, յես ամբողջապես նրա զայրույթն ու ատելությունը և ազատության ծարավը: Յես միայն ճիշ եմ, դուրս պոկված նրա կրճքից: Ստիպիր լսել այդ ճիշը և նրա փոխարեն կհնչի հաղար ուրիշը... Յեվ նրանք կհնչեն ավելի ու ավելի բարձր, կոչելով ազատության ռոպեն: Լավ իմացիր, գնդապետ Ռավենշտեյն, դու ինձ չես սպանի: Յես անմահ եմ, վերստին եմ իմ անունն և ազատություն...

Կովում են:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Յես վերավորված եմ... (Յեբեբում ե) Վերջացավ: Յես այլևս չեմ կարող...

Ընկնում ե:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Կատարվեց:

ՌԱՎԵՆՇՏԵՅՆ. Խոնարհեցեք ջահերը... յես այլևս չեմ տեսնում... Վորդիս...

Մեռնում ե:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Թող գնա վորդու մոտ: Մարմինը նետեցեք ցած:

Զինվորները Ռ ա վ ե ն շ տ ե յ ճ ի մարմինը նետում են բացվածֆից ցած:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Ստորերկրյա գետակը նրանց յերկուսին ել կքշի դեպի Կարմիր գետի ջրերը: Վոչ վոք չի իմանա նրանց գաղտնիքը: Հայրենիքն ազատված է արյունարբու զազանից: Թող այդպես լինի բոլոր նրանց հետ, ովքեր կհամարձակվեն իրենց վտարը դնել Տոնկինի պարանոցին:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Մանդարին Կուանգ-Սինգ, դու կատարեցիր քո պարտքը հայրենիքիդ հանդեպ: Նախահայրերիդ ցուցակը փայլում է նախկին պայծառությամբ: Քո անպատվությունը վերափոխվեց փառքի: Նա, ով իր հայրենիքի համար անարզանք է կրում, իր անձնական վրեժը զոհաբերելով ընդհանուր վրեժին, նա չի անարգված:

Ռ ա - Շ ե ն ը հառաչում ե: Կ ու ա ն գ - Ս ի ն գ ը դառնալով նրա կողմը, լսու մայում է նրան:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Նա հավատարիմ դենք եր մեր ձեռքում: Թող արտասվի իր վիշտը, արտասուքը թեթևություն կբերի նրան: Ժամանակը բոլոր վերքերը կբուժի:

ԿՈՒԱՆԳ-ՍԻՆԳ. Վոչ, նրա սիրտը խորտակված է ընդմիշտ:

ԻԳՈՒԵՆ-ԱՆ. Յեթե այդպես է, խղճանք նրան և ասենք, ինչպես պատշաճ է իմաստուններին՝ «Ուր խոսքը հայրենիքի ազատությանն է վերաբերում, միլիոնների ազատության և յերջանկության, ի՞նչ արժե մեկ կնոջ սիրտը»...



ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

4399 8

Գ. ՆԱՎԼՈՎ

БРОНЗОВЫЙ ИДОЛ

ДРАМА В 5 ДЕЙСТВИЯХ



ԱՐՄԵՆԳԻՅԱՆ—ԵՐԻՎԱՆ